



AFIC

ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ԵՎ
ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՍՈՑԻԱՑԻԱ



ԿՈՐՊՈՐԱՏԻՎ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԿԵՆՏՐՈՆ

Բ Ա Ժ Ն Ե Տ Ի Ր Ո Ջ ՈՒ Ղ Ե Ց ՈՒ Յ Ց

ԵՐԵՎԱՆ – 2004

ՀՐԱՏԱՐԱԿՎԵԼ Է «ՄԱՍՆԱՎՈՐ ԶԵՌՆԵՐԵՑՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ» (ԱՄՆ)
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՄԲ



«Օտարերկրյա ներդրումների և համագործակցության ասոցիացիան» (AFIC) ոչ առևտրային, հասարակական կազմակերպություն է, որի գործունեության հիմնական նպատակն է նպաստել և աջակցել Հայաստանում մասնավոր ձեռնարկատիրության և գործարար միությունների զարգացմանը, բարենպաստ և քաղաքակիրթ գործարար միջավայրի ձևավորմանը և օտարերկրյա ներդրումների խթանմանը, միջազգային տնտեսական կապերի և համագործակցության զարգացմանը:

ՀՀ, ք. Երևան, Տիգրան Մեծի պող. 4
Հեռ. (374 1) 525 082; 562 400
Ֆաքս (374 1) 562 400
Էլ. փոստ afic@arminco.com
info@afic.am
Ինտերնետ էջ www.afic.am

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ	4
1. ԲԱԺՆԵՏՈՄՍԸ ԵՎ ԴՐԱ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ	5
1.1 Արժեքուրթ հասկացության իրավական էությունը	5
1.2 Բաժնետոմս արժեքրթի առանձնահատկությունները	5
2. ԲԱԺՆԵՏԵՐԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՀԱՍԱԿԱՐԳԸ	7
3. ԲԱԺՆԵՏԵՐԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄԸ	10
3.1 Ընկերության շահույթի բաշխմանը մասնակցելու բաժնետիրոջ իրավունքը	10
3.2 Բաժնետիրական ընկերության լուծարման դեպքում գույքից իր հասանելիք մասը ստանալու բաժնետիրոջ իրավունքը	14
3.3 Բաժնետիրական ընկերության կառավարմանը մասնակցելու բաժնետիրոջ իրավունքը	15
3.4 Բաժնետիրական ընկերության գործունեության վերաբերյալ տեղեկություններ փաստաթղթեր ստանալու բաժնետիրոջ իրավունքը	23
3.5 Բաժնետիրական ընկերության կողմից արժեքրթերի տեղաբաշխման դեպքում բաժնետիրոջ նախապատվության իրավունքը	26
3.6 Բաժնետոմսերի հետգնում պահանջելու բաժնետիրոջ իրավունքը	27
3.7 Բաժնետիրոջ իրավունքների դատական պաշտպանությունը	30
3.8 Խոշոր և շահագրգռվածության առկայությամբ գործարքներում մասնակցելու բաժնետիրոջ իրավունքը	32
4. ԲԱԺՆԵՏՈՄՍԻ ՏԵՍԱԿՈՎ ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾ ԲԱԺՆԵՏԵՐԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ	34
4.1 Սովորական բաժնետոմսերի սեփականատերերի իրավունքները	34
4.2 Արտոնյալ բաժնետոմսերի սեփականատերերի իրավունքները	34
4.3 Սովորական և արտոնյալ բաժնետոմսերի համեմատական բնութագիրը	35
5. ԲԱԺՆԵՏՈՄՍԵՐԻ ՈՐՈՇԱԿԻ ՓԱԹԵԹԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԴԵՊՔՈՒՄ ԲԱԺՆԵՏԻՐՈՋ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ	37
6. ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՁԵՎԵՐԸ: ԲԱԺՆԵՏԵՐԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ	38
7. ԲԱԺՆԵՏԻՐՈՋ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ	40

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հայաստանում բաժնետիրական ընկերությունները ձևավորվել են հիմնականում տնտեսական բարեփոխումների կարևորագույն ուղղություն հանդիսացող մասնավորեցման արդյունքում: Այս գործընթացում բաժնետիրական ընկերությունների ընտրությունը պատահական չէր և առաջին հերթին պայմանավորված էր բաժնետիրական ընկերությունների հիմնարար առանձնահատկություններով, որը հիմնվում է հետևյալ սկզբունքի վրա. որոնց հիմքում ընկած է բաժնետոմսի երկակի բնույթ: Վերջինիս էությունը հանգում է հետևյալին. բաժնետոմսը հնարավորություն է ընձեռում ֆիզիկապես գոյություն ունեցող սեփականությունը բաժանել դրա նկատմամբ սեփականության իրավունքից և միաժամանակ հանդես գալով որպես սեփականության օբյեկտ՝ իր մեջ ամրագրում է որոշակի իրավունքներ: Նշված սկզբունքի օգտագործումն ունի մի շարք առավելություններ, որոնց թվին են դասվում սահմանափակ պատասխանատվությունը, ֆինանսական միջոցների ազատ ներգրավումը, սեփականատերերի կազմի անխափան փոփոխումը, արհեստավարժ կառավարումը, երկարաժամկետ և կարճաժամկետ ներդրումների միջև եղած ժամկետային սահմանագծի վերացումը և այլն:

Անհրաժեշտ է նշել, որ բաժնետիրական ընկերությունը հասարակ իրավաբանական անձ չէ: Այն ունի ավելի բարդ կառուցվածք, քան այլ իրավաբանական անձինք: Այդ բարդ կառուցվածքն առաջին հերթին պայմանավորվում է բաժնետիրական ընկերություններում ձևավորվող փոխհարաբերություններով, որոնք հանգում են ընկերության և բաժնետերերի իրավական պարտականությունների ու իրավունքների ամբողջությանը:

Չնայած բաժնետիրական սեփականության հարցերին նվիրված գրականության աճող քանակին, բաժնետիրական ընկերությունների գործունեության հիմնախնդիրները Հայաստանում գործնականորեն շատ քիչ են քննարկվել: Այս տեսանկյունից առանձնահատուկ նշանակություն են ստանում բաժնետիրոջ իրավունքների և պարտականությունների ներկայացումը ՀՀ-ում, ինչպես նաև դրանց գործնական կիրառման նրբությունների պարզաբանումը:

1. ԲԱԺՆԵՏՈՄՍԸ ԵՎ ԴՐԱ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1.1. Արժեքուղթ հասկացության իրավական էությունը

Սեփական իրավունքների և պարտականությունների շրջանակը պատկերացնելու համար բաժնետերն առաջին հերթին պետք է իմանա, թե ինչ է իրենից ներկայացնում բաժնետոմսը: Բաժնետոմսն արժեթղթի տեսակ է: Հետևաբար, բաժնետոմսի էությունը պարզաբանելու համար առաջին հերթին պետք է անդրադառնալ արժեթղթի առանձնահատկություններին:

Արժեթղթի ծագումը բացատրվում է գույքային շրջանառության ակտիվացմամբ, որի հետևանքով անհրաժեշտություն առաջացավ իրավունքների ձևակերպման առավել հարմար եղանակների: Արժեթուղթը սահմանված ձևի և պարտադիր վավերապայմանների պահպանմամբ, գույքային իրավունքները հավաստող փաստաթուղթ է, որն արտացոլում է տվյալ փաստաթղթի առնչությամբ ծագող իրավունքների ու պարտականությունների համակարգը:

Իրավական տեսանկյունից արժեթուղթն ունի երկակի բնույթ: Մի կողմից, արժեթուղթը գույք է և հանդիսանում է գույքային շրջանառության օբյեկտ: Այսինքն արժեթուղթը կարող է դառնալ քաղաքացիաիրավական տարբեր գործարքների առարկա, և նրա նկատմամբ կարող են ծագել գույքային իրավունքներ: Իսկ մյուս կողմից, արժեթուղթն իր մեջ ամբողջացնում է իրավունքների որոշակի համակարգ, որը պայմանավորված է կոնկրետ արժեթղթի բովանդակությամբ:

Որպես տնտեսական կատեգորիա արժեթուղթը կարելի է դիտարկել այն թողարկող անձի և այն ձեռքբերող անձի շահերի տեսանկյուններից: Արժեթղթի առնչությամբ առաջինը նպատակ է հետապնդում ներգրավել իր տնտեսական գործունեության համար անհրաժեշտ ֆինանսական միջոցները, իսկ երկրորդն ակնկալում է ստանալ արժեթղթում ներդրված իր միջոցներն ավելի մեծ նշանակությամբ կամ գուտ արժեթղթի բովանդակությամբ պայմանավորված այլ իրավունքներ: Այսինքն արժեթուղթն ամբողջացնելով թողարկող և ձեռքբերող անձանց շահերը՝ նպաստում է ֆինանսական միջոցների անխափան վերաբաշխմանը: Արժեթղթի միջոցով վերանում է երկարաժամկետ և կարճաժամկետ ներդրումների միջև եղած ժամկետային սահմանագիծը. այսպես, բաժնետիրական ընկերության կողմից բաժնետոմսերի թողարկումը հանդիսանում է ներդրումների անժամկետ ներգրավման տարատեսակ, իսկ ներդրողների կողմից՝ այդ ժամկետի վերաբերյալ որոշումը կայացվում է ինքնուրույնաբար՝ ցանկացած պահի օտարելու հնարավորությամբ:

1.2. Բաժնետոմս արժեթղթի առանձնահատկությունները

Բաժնետոմս կարող են թողարկել միայն բաժնետիրական ընկերությունները, իսկ համաձայն «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի (այսուհետև՝ Օրենք) բաժնետիրական ընկերություն է համարվում առևտրային կազմակերպություն հանդիսացող այն տնտեսական ընկերությունը, որի կանոնադրական կապիտալը բաժանված է ընկերության նկատմամբ պարտավորական իրավունքը հավաստիացնող որոշակի թվով բաժնետոմսերի: Պարտավորական իրավունքների առանձնահատկությունը կայանում է նրանում, որ բաժնետերերը չունեն գույքային իրավունքներ ընկերության գույքի նկատմամբ: Այս իրավունքն ի հայտ է գալիս միայն ընկերության լուծարման ժամանակ, երբ բաժնետերերն ստանում են ընկերության գույքից իրենց հասանելիք մասը: Այսինքն սովորական բաժնետոմսերը դիտարկվում են որպես բաժնետիրական ընկերության կանոնադրական կապիտալի պայմանական միավորներ, և դրանց թողարկման ճանապարհով ներգրավված միջոցները դառնում են բաժնետիրական ընկերության սեփականությունը, իսկ բաժնետերը դառնում է բաժնետոմսի սեփականատեր:

Այս ամենի հետ միասին բաժնետոմսի գրավչությունը թե բաժնետիրոջ և թե ընկերության համար արտահայտվում է ինչպես բաժնետոմսի առանձնահատկություններով, այնպես էլ բաժնետոմսով ամրագրվող իրավունքներով:

Բաժնետոմսի կարևորագույն առանձնահատկություններն են.

Բաժնետոմսը ենթակա չէ բաժանման: Եթե բաժնետոմսը հանդիսանում է մի քանի սեփականատիրոջ համատեղ սեփականության օբյեկտ, ապա բաժնետոմսը ոչ թե բաժանվում և բաշխվում է այդ սեփականատերերի միջև, այլ նրանք հանդես են գալիս որպես մեկ բաժնետեր:

Բաժնետոմսի գոյության ժամկետը սահմանափակված չէ: Բաժնետոմսը շրջանառում է և նրանով ամրագրվող իրավունքներն ու պարտավորությունները գոյություն ունեն այնքան ժամանակ, քանի դեռ գոյություն ունի այն թողարկող բաժնետիրական ընկերությունը:

Բաժնետոմսին բնութագրական է սահմանափակ պատասխանատվությունը: Ընկերությունը պատասխանատու չէ իր բաժնետերերի պարտավորությունների համար, իսկ բաժնետերերն իրենց հերթին պատասխանատվություն չեն կրում ընկերության պարտավորությունների համար: Ընկերության բաժնետերերը պատասխանատվություն չեն կրում նրա պարտավորությունների համար և իրենց պատկանող ներդրման սահմաններում կրում են ընկերության գործունեության հետ կապված վնասների ռիսկեր: ՀՀ օրենսդրությամբ առանձնացվում են դեպքեր, երբ բաժնետերը կարող է կրել նաև լրացուցիչ (սուբսիդիար) պատասխանատվություն:

Բաժնետոմսը ենթակա չէ մարման: Բաժնետիրական ընկերությունը չի պարտավորվում ետ վերադարձնել բաժնետերերից ներգրավված միջոցները: Չնայած օրենսդրությամբ նախատեսվում են դեպքեր, երբ ընկերությունը կարող է ձեռք բերել կամ պարտավոր է հետ գնել բաժնետերերին պատկանող բաժնետոմսերը: Նշված գործընթացներն անմիջականորեն առնչվում են բաժնետոմսերի մարման հետ: Միաժամանակ, օրենքը այս գործընթացներին վերագրում է տարբեր բովանդակություն: Այսպես, եթե բաժնետոմսերը բաժնետիրական ընկերության հաշվեկշռում արտացոլվում են ընկերության կառավարման մարմինների որոշմամբ, կիրառվում է «ձեռքբերում» հասկացությունը, իսկ, եթե ընկերությունն ուղղակի պարտավոր է ձեռքբերել բաժնետոմսերը, ապա՝ «հետգնում» հասկացությունը:

Բաժնետոմսը կարելի է տարանջատել և համախմբել

Բաժնետոմսերի տարանջատումը և համախմբումը հանգեցնում են շրջանառության մեջ բաժնետոմսերի թվաքանակի փոփոխմանը և կատարվում են դրանց անվանական արժեքը փոքրացնելու և մեծացնելու ճանապարհով: Բաժնետոմսի տարանջատման դեպքում շրջանառության մեջ գտնվող բաժնետոմսերի քանակը մեծանում է: Արժեթղթերի զարգացած շուկաների փորձը ցույց է տալիս, որ բաժնետոմսերի տարանջատումը (սալիտը) հիմնականում կատարում են բարգավաճող ընկերությունները, որոնց բաժնետոմսերի շուկայական գինը անշեղորեն աճում է, և որպեսզի բաժնետոմսերը չկորցնեն իրենց իրացվելիությունը՝ ընկերությունը կարող է որոշում ընդունել բաժնետոմսերի տարանջատման մասին: Այսպես, եթե ընկերությունը հայտարարում է 1:2 հարաբերությամբ բաժնետոմսերի տարանջատման մասին, ապա շրջանառության մեջ գտնվող մեկ բաժնետոմսի դիմաց տրվում է երկուսը: Բաժնետոմսերի տարանջատման հակադարձ գործընթացը կոչվում է համախմբում կամ հակադարձ սալիտ, որի դեպքում շրջանառության մեջ բաժնետոմսի թվաքանակը փոքրանում է:

2. ԲԱԺՆԵՏԵՐԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՀԱՍՏԱԿԱՐԳԸ

Բաժնետիրական ընկերության առանձնահատկությունը կայանում է նրանում, որ նրա բաժնետոմսերն անընդհատ շրջանառում են, որի հետևանքով ընկերության բաժնետերերի կազմն անընդհատ փոփոխվում է: Սա կարող է բարդացնել ընկերության կողմից բաժնետերերի նկատմամբ ստանձնած պարտավորությունների պատշաճ կատարման գործընթացը: Հետևաբար բաժնետերերի օրինական շահերը պաշտպանելու համար բաժնետիրական ընկերությունը պարտադիր կարգով պետք է հաշվառի բաժնետերերի իրավունքները, որն իրականացվում է ռեեստրի վարման միջոցով:

Ռեեստրի վարման համակարգի դերն առավել կարևորվում է Հայաստանում, քանի որ այստեղ շրջանառող բոլոր բաժնետոմսերն անվանական են (չնայած այն հանգամանքի, որ համաձայն ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 157-րդ հոդվածի՝ բաժնետոմսերը կարող են լինել ըստ ներկայացնողի կամ անվանական): Ընկերության բաժնետերերի ռեեստրը վարվում է միայն անվանական արժեթղթերի համար, այսինքն ռեեստրի վարման միջոցով օրինականացվում են անվանական արժեթղթերի սեփականատերերի իրավունքները: Բաժնետիրական ընկերության բաժնետերերի ռեեստրն իրենից ներկայացնում է մի համակարգ, որն ամբողջական տվյալներ է պարունակում ընկերության բաժնետերերի և բաժնետոմսերի վերաբերյալ:

Համաձայն ՀՀ իրավական ակտերի՝ անվանական արժեթղթերի սեփականատերերի ռեեստրը անվանական արժեթղթերի թողարկման, դրանց սեփականատերերի, անվանական արժեքի, քանակի և տեսակի վերաբերյալ տվյալների միասնական համակարգ է, որը բաղկացած է հետևյալ գրանցամատյաններից՝

- բաժնետերերի հաշվառման;
- բաժնետոմսերով կատարված գործառնությունների;
- բաժնետոմսերի հավաստագրերի տրման դեպքում նաև՝ բաժնետոմսերի հավաստագրեր տալու և ոչնչացնելու:

Ռեեստրի վարման համակարգում խիստ կարևորվում է անձնական հաշվի դերը, քանի որ առանց անձնական հաշիվ բացելու բաժնետերը չի կարող օգտվել բաժնետոմսով ամրագրվող իրավունքներից: Անձնական հաշիվը հանդիսանում է նաև բաժնետոմսի նկատմամբ սեփականության իրավունքի ապացույց: Բացի այդ, համաձայն Օրենքի՝ բաժնետիրոջ անձնական հաշիվը համարվում է բաժնետոմսերի տեղաբաշխման ոչ փաստաթղթային ձև: Անձնական հաշվում գրառումը կատարվում է ընկերության բաժնետիրոջ կամ նրա կողմից լիազորված անձի պահանջով: Այս դեպքում բաժնետերը կամ նրա կողմից լիազորված անձը պարտավոր են ներկայացնել դիմում և գրանցման համապատասխան իրավական հիմքերը: Բաժնետիրոջ կողմից նշված փաստաթղթերը ներկայացնելու պահից երեք օրվա ընթացքում բաժնետերերի ռեեստրում կատարվում է համապատասխան գրառումը: Ռեեստրում գրառում կատարելու մերժումը թույլատրվում է միայն ՀՀ իրավական ակտերով սահմանված դեպքերի: Մերժման մասին ռեեստր վարողը պարտավոր է հիմնավորված ծանուցել պահանջող ներկայացնող անձին պահանջող ներկայացնելու պահից հինգ օրվա ընթացքում: Ռեեստրում գրառման մերժումը կարող է գանգատարկվել դատական կարգով:

Ինչպես արդեն նշել ենք, բաժնետոմսերն անընդհատ շրջանառում են: Ուստի իրավունքների հաշվառման տեսանկյունից բաժնետոմսերով կատարված ցանկացած գործարք պետք է գրանցվի ռեեստրում: Այս նպատակի համար ռեեստրում կա հատուկ գրանցամատյան՝ բաժնետոմսերով կատարված գործառնությունների, որը վարվում է ամեն օր, և նրանում արտացոլվում են առուվաճառքի, նվիրատվության, ժառանգության, բաժնետոմսերի գրավադրման, լիազորագրային և անվանական սեփականատիրոջ հանձնման, փոխանակման, ինչպես նաև օրենսդրությամբ սահմանված այլ գործարքներ:

Բաժնետոմսերով կատարված գործարքների գրանցամատյանում յուրաքանչյուր գրանցում ոչ ուշ, քան 2 աշխատանքային օրվա ընթացքում արտացոլվում է բաժնետերերի հաշվառման գրանցամատյանում, որը կարող է վարվել նաև էլեկտրոնային գրառումների միջոցով:

Ռեեստրի վարման համակարգի մեջ մտնող վերջին գրանցամատյանը բաժնետոմսերի հավաստագրեր տալու և ոչնչացնելու գրանցամատյանն է, որը ներառում է բաժնետերերին տրված և նրանցից հետ ստացած ու մարված հավաստագրերի վերաբերյալ տեղեկություններ: Բաժնետերերի ռեեստրի վարման և հաշվառման խնդիրներն անմիջականորեն առնչվում են նաև բաժնետոմսի տեղաբաշխման ձևի հետ: Ըստ այս հատկանիշի բաժնետոմսերը լինում են փաստաթղթային և ոչ փաստաթղթային, կամ ինչպես նշված է Օրենքում, ընկերության բաժնետոմսերը կարող են տեղաբաշխվել ինչպես տպագրական եղանակով պատրաստված բաժնետոմսերի, այնպես էլ ընկերության բաժնետերերի ռեեստրում բաժնետիրոջ անձնական հաշվում գրանցման տեսքով: Համաձայն Օրենքի՝ բաժնետոմսը տպագրական եղանակով տեղաբաշխելու դեպքում բաժնետիրոջը տրվում է տպագրական եղանակով պատրաստված բաժնետոմսեր կամ բաժնետոմսի հավաստագիր, իսկ բաժնետոմսերի տեղաբաշխումը ընկերության բաժնետերերի ռեեստրում անձնական հաշվում գրանցման տեսքով իրականացնելու դեպքում՝ միայն բաժնետոմսերի հավաստագիր:

Քաղվածք անձնական հաշվից

Յուրաքանչյուր բաժնետեր իրավունք ունի համոզվել, որ ինքը գրանցված է ռեեստրում՝ անձնական հաշվից քաղվածք պահանջելու միջոցով: Ռեեստր վարողը երեք աշխատանքային օրվա ընթացքում բաժնետերերին, նրանց գրավոր դիմումների հիման վրա, պարտավոր է տրամադրել այդ քաղվածքը, որը չի համարվում արժեթուղթ կամ արժեթղթին փոխարինող փաստաթուղթ: Քաղվածքը տրամադրվում է անվճար, եթե ռեեստրը վարում է բաժնետիրական ընկերությունը և համապատասխան վճարի դիմաց, եթե ռեեստրը վարում է համապատասխան մասնագիտացված կազմակերպությունը: Այս դեպքում վճարը չի կարող գերազանցել քաղվածքի տրամադրման համար կատարվող ծախսերը: Ռեեստր վարողը կարող է առանձին գրանցամատյան վարել նաև քաղվածքների տրամադրման գործընթացը կանոնակարգելու համար: Այս գրանցամատյանում կարող են գետեղվել քաղվածքի հերթական համարը, ամսաթիվը, որի դրությամբ տրվում է քաղվածքը, բաժնետիրոջ մասին տվյալները և այլն:

Ռ՞վ իրավունք ունի վարել բաժնետիրական ընկերության բաժնետերերի ռեեստրը

Համաձայն Օրենքի բաժնետերերի ռեեստրը կարող է վարել կամ բաժնետիրական ընկերությունը, կամ ՀՀ իրավական ակտերով սահմանված կարգով համապատասխան լիցենզիա ունեցող կազմակերպությունը, որին ընկերությունը պարտավոր է հանձնարարել ռեեստրի վարման և պահպանման գործը: Հայաստանի Հանրապետությունում ռեեստրի վարման և դեպոզիտար գործունեությունը իրականացվում է Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիա ինքնակարգավորվող կազմակերպության կողմից, որի հետ կնքելով ռեեստրի վարման պայմանագիր՝ բաժնետիրական ընկերությունն ազատվում է այն վարելու և պահպանելու ՀՀ օրենսդրությամբ նախատեսված պահանջներից, ինչպես նաև պահանջների ոչ պատշաճ կատարման արդյունքում առաջացող ՀՀ օրենսդրությամբ նախատեսված պատասխանատվությունից:

Անհրաժեշտ է ավելացնել, որ հաշվետու թողարկող* հանդիսացող բաժնետիրական ընկերությունները պարտավոր են իրենց արժեթղթերի ռեեստրի վարումը հանձնել Կենտրոնական Դեպոզիտարիային, իսկ մինչև 50 սեփականատեր ունեցող բաժնետիրական ընկերությունները նշված կազմակերպության հետ կարող են ռեեստր վարելու և պահպանելու պայմանագիրը կնքել ըստ իրենց հայեցողության, այսինքն նրանք իրավունք ունեն ռեեստրի վարումը կազմակերպել սեփական ուժերով և սեփական պատասխանատվությամբ:

Օրենսդրությամբ սահմանվում է, որ ռեեստրի վարումը և պահպանումը մասնագիտացված կազմակերպությանը հանձնարարած ընկերությունը չի ազատվում այն վարելու և պահպանելու համար սահմանված պատասխանատվությունից: Անհրաժեշտ է նշել, որ ընկերության և ռեեստր վարողի միջև պետք է կնքվի գրավոր պայմանագիր, որը կսահմանի նրանց միջև փոխհարաբերությունները, այդ թվում նաև՝ կողմերի պատասխանատվության խնդիրը:

* Համաձայն ՀՀ օրենսդրության հաշվետու թողարկող է համարվում այն բաժնետիրական ընկերությունը, որի ցանկացած արժեթուղթ գրանցված է ֆոնդային բորսայում, ունի 50-ից ավելի բաժնետեր, և զուտ ակտիվների մեծությունը գերազանցում է 5 միլիոն դրամը:

3. ԲԱԺՆԵՏԵՐԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄԸ

Բաժնետիրական ընկերությունում ձևավորվող իրավահարաբերությունները ի սկզբանե գույքային են, ինչը պայմանավորված է բաժնետիրական ընկերության առևտրային կազմակերպություն լինելու հանգամանքով, այսինքն բաժնետիրական ընկերությունն իր գործունեության արդյունքում շահույթ ստանալու նպատակ է հետապնդում: Հետևաբար բաժնետիրական ընկերության հիմքում ընկած են գույքային հարաբերություններ, որոնք ծագում են հենց ընկերության հիմնադրման պահին, երբ ընկերության հիմնադիրները պարտավորվում են մինչև ընկերության գրանցումն ամբողջությամբ վճարել կանոնադրական կապիտալը: Գույքային հարաբերություններն արտահայտվում են բաժնետերերի գույքային իրավունքների մեջ, որոնց թվին կարելի է դասել շահութաբաժինների և ընկերության լուծարման դեպքում՝ ընկերությունից իր հասանելիք մասի թիվացման իրավունքները:

Բաժնետերերն ունեն նաև ոչ գույքային իրավունքներ: Օրինակ՝ ընկերության կառավարմանը մասնակցելու, ընկերության գործունեության մասին տեղեկություններ ստանալու և այլն: Միաժամանակ բաժնետոմսն իր սեփականատիրոջն օժտում է այնպիսի լիազորություններով և իրավունքներով, որոնց շնորհիվ բաժնետերը պաշտպանում է իր գույքային իրավունքները: Օրինակ՝ առաջնահերթ կարգով լրացուցիչ բաժնետոմսերի ձեռքբերման իրավունքը, բաժնետոմսի հետզմում պահանջելու կամ հայցով դատարան դիմելու իրավունքները և այլն:

Սակայն անհրաժեշտ է նշել, որ իրավունքների այս համակարգում առաջնահերթությունը պատկանում է գույքային իրավունքներին, որոնց հիման վրա ձեռք են բերվում նաև ոչ գույքայինները:

3.1 Ընկերության շահույթի բաշխմանը մասնակցելու բաժնետիրոջ իրավունքը

Բաժնետերը՝ լինի հասարակ, թե արտոնյալ բաժնետոմսի սեփականատեր, իրավունք ունի ստանալ շահութաբաժիններ բաժնետիրական ընկերության գործունեությունից առաջացած շահույթից: Շահութաբաժինը (դիվիդենդը) բաժնետիրական ընկերության շահույթի մի մասն է: Բաժնետերերին շահութաբաժինների վճարումը կատարվում է որոշակի քաղաքականության շրջանակներում: Տեսականորեն, այդ քաղաքականության ընտրությունը նախատեսում է լուծել երկու կարևոր հիմնախնդիր.

- բաժնետերերի բարեկեցության մակարդակի բարձրացում.
- ընկերության գործունեության բավարար ֆինանսավորում:

Շահութաբաժնային քաղաքականության ընտրությունը պայմանավորվում է յուրաքանչյուր կոնկրետ ընկերության առանձնահատկություններով և ենթակա է այնպիսի գործոնների ազդեցության, ինչպիսիք են ընկերության եկամտաբերության մակարդակը, աճի տեմպերը, հեղինակությունը շուկայում, իրացվելիության մակարդակը, ֆինանսավորման աղբյուրներից օգտվելու հնարավորությունը և այլն: Անհրաժեշտ է նշել, որ շահութաբաժնային քաղաքականության ընտրության վրա ազդում է նաև ազգային շուկաների առանձնահատկությունները: Օրինակ, Ճապոնիայում շահութաբաժինները վճարվում են մնացորդային սկզբունքով: Միաժամանակ ճապոնական ընկերությունները վարում են կայուն, բայց փոքր շահութաբաժինների վճարման քաղաքականություն: Քաղաքականության նման ընտրությունը բացատրվում է նրանով, որ Ճապոնիայում բաժնետերերը հիմնականում իրավաբանական անձինք են, որոնց հետաքրքրում է ոչ թե շահութաբաժինների ստացումը, այլ ընկերության կառավարմանը մասնակցությունը, և ընկերությունը գործում է ոչ թե ի շահ բաժնետերերի, այլ աշխատակիցների:

Համաշխարհային պրակտիկայում կիրառություն են ստացել շահութաբաժնային հետևյալ քաղաքականությունները.

Կայուն եկամուտների քաղաքականություն

Այս քաղաքականությունը դրական արձագանք է ստանում բաժնետերերի մոտ: Շահութաբաժինների վճարման կայունությունը ընկերությանը բնութագրում է որպես նվազ ռիսկային, քանի որ սահմանված մակարդակի վրա շահութաբաժինների պահպանումը ընկերությանը հնարավորություն է տալիս խուսափել բաժնետերերի կամ հնարավոր բաժնետերերի դժգոհությունից և վերջինիս բոլոր հնարավոր հետևանքներից (օրինակ՝ բաժնետոմսերի զանգվածային օտարումից, որը կարող է հանգեցնել բաժնետոմսերի շուկայական գնի անկման): Անհրաժեշտ է ավելացնել, որ շատ քիչ ընկերություններ են ի վիճակի կիրառել քաղաքականության այս տարբերակը, քանի որ իրենց տնտեսական գործունեության արդյունքում նրանց մոտ, որպես կանոն, նկատվում է շահութաբերության մակարդակի տատանումներ, որի հետևանքով ընկերության համար տնտեսապես ոչ բարենպաստ պայմաններում դժվար է պահպանել կայուն շահութաբաժինների վճարման քաղաքականությունը:

Շահութաբաժինը որպես ընկերության շահույթից վճարվող հաստատուն տոկոս

Այս քաղաքականության համաձայն շահութաբաժինները վճարվում են որպես ընկերության շահույթից հաստատուն տոկոս: Չուտ շահույթի մեծության տատանման պայմաններում շահութաբաժնի մեծությունը նույնպես տատանվում է: Այսինքն, երբ ընկերության շահույթը կտրուկ նվազում է կամ, եթե ընկերությունն աշխատում է վնասով, ապա շահութաբաժիններն էլ են կտրուկ նվազում, կամ ընդհանրապես չեն վճարվում: Եվ ընդհակառակը:

Փոխհամաձայնության քաղաքականություն

Համաձայն այս քաղաքականության՝ ընկերությունը վճարում է կայուն, բայց ոչ բարձր շահութաբաժիններ և ընկերության համար բարեհաջող տարիներին կատարում է լրացուցիչ վճարումներ: Որպես կանոն բաժնետերերը չեն ընդունում նման անորոշությունը, չնայած որ այս քաղաքականությունը որոշակի ճկունություն է ապահովում ընկերության ֆինանսատնտեսական գործունեության համար: Փոխհամաձայնության քաղաքականությունը հիմնականում իրագործում են այն ընկերությունները, որոնց մոտ զգացվում է շահույթի կտրուկ տատանումներ:

Մնացորդային շահութաբաժինների քաղաքականություն

Այս քաղաքականության կողմնակիցները գտնում են, որ եթե բաժնետիրական ընկերության ներդրումային ծրագրերը հետագայում խոստանում են ապահովել շահութաբերության բարձր մակարդակ՝ բաժնետերերն առանձնակի տարբերություն չեն տեսնում ներդրումային ծրագրերի ֆինանսավորման համար շահույթի օգտագործման և շահութաբաժիններ ստանալու միջև: Այսինքն շահութաբաժինները վճարվում են ներդրումային ծրագրերը ֆինանսավորելուց հետո:

Բաժնետոմսերով շահութաբաժինների վճարում

Վերջինիս իրականացման համար հիմք են հանդիսանում ընկերության մոտ կանխիկ դրամական միջոցների բացակայությունը: Բացի այդ, տարբերակը լայն կիրառություն է ստանում այն ընկերություններում, որոնք զարգանում են արագ տեմպերով և այդպիսի պայմաններում հատուկ հակվածություն ունեն լրացուցիչ դրամական միջոցների ներգրավման նկատմամբ, որոնց համար աղբյուր է հանդիսանում ընկերության շահույթը: Այս տարբերակը միաժամանակ նպաստում է բաժնետոմսերի իրացվելիության բարձրացմանը, քանի որ լրացուցիչ բաժնետոմսերի տեղաբաշխումը իջեցնում է դրանց շուկայական գինը:

Ըստ որոշ մոտեցումների՝ բաժնետոմսերով շահութաբաժինների վճարման արդյունքում բաժնետերերը ոչինչ չեն ստանում, քանի որ բաժնետոմսերի ընդհանուր թիվը մեծանում է, դրամական միջոցները հաշվեկշռում մնում են անփոփոխ, մեկ բաժնետոմսի հաշվով ընկերության ակտիվները փոքրանում են, և յուրաքանչյուր բաժնետիրոջ բաժնետոմսերի համամասնությունը ընդհանուրի մեջ մնում է անփոփոխ: Սակայն հարկ է

նշել, որ անհրաժեշտության դեպքում դրամական շահութաբաժինների փոխարեն վճարված բաժնետոմսերը բաժնետիրոջ կողմից կարող են օտարվել և բերել բաժնետիրոջն անհրաժեշտ միջոցներ:

Շահութաբաժինների վճարման կարգը Հայաստանում

Համաձայն Օրենքի 49-րդ հոդվածի՝ *Ընկերությունն իրավունք ունի հայտարարել (որոշում ընդունել) տեղաբաշխված բաժնետոմսերի դիմաց եռամսյակային, կիսամյակային կամ տարեկան շահութաբաժինների վճարման մասին:*

Օրենքի նշված դրույթից հետևում են հետևյալ կանոնները.

- շահութաբաժնի վճարման համար անհրաժեշտ պայման է հանդիսանում շահութաբաժնի վճարման մասին որոշման ընդունումը (հայտարարումը).
- շահութաբաժնի վճարման (հայտարարման) մասին որոշման ընդունումը ընկերության իրավունքն է, և ոչ թե պարտավորությունը, այսինքն ընկերությունը իրավունք ունի, բայց պարտավոր չէ որոշումներ ընդունել շահութաբաժնի վճարման վերաբերյալ: Ընկերությունը վճարում է միայն հայտարարված շահութաբաժինները: Հայտարարված շահութաբաժինները չվճարելու դեպքում ընկերությունը բաժնետիրոջ առջև պատասխանատվություն է կրում իր պարտավորությունները չկատարելու համար: Եթե շահութաբաժինները հայտարարված չեն, ապա դրանք ենթակա չեն վճարման.
- շահութաբաժնի վճարման մասին որոշումը վերաբերում է միայն տեղաբաշխված բաժնետոմսերին:

Ընդհանուր առմամբ, շահութաբաժինը վճարվում է ընկերության տվյալ տարվա զուտ շահույթից: Սակայն որոշ դեպքերում Օրենքը նախատեսում է շահութաբաժնի վճարումը այլ աղբյուրներից: Օրենքի այդ դրույթը վերաբերում է որոշակի ձևի արտոնյալ բաժնետոմսերի (օրինակ՝ հաստատագրված շահութաբաժիններով արտոնյալ բաժնետոմսերի) դիմաց շահութաբաժինների վճարմանը, որը կատարվում է այդ նպատակի համար ստեղծված հատուկ հիմնադրամի միջոցներից:

Ընկերությունը կարող է շահութաբաժիններ վճարել ինչպես դրամով, այնպես էլ գույքով, եթե այդ մասին սահմանված է բաժնետիրական ընկերության կանոնադրությամբ:

Ինչպես արդեն նշվել է, ըստ վճարման ժամկետի, շահութաբաժինները լինում են եռամսյակային, կիսամյակային և տարեկան: Եռամսյակային և կիսամյակային շահութաբաժինները համաձայն Օրենքի միավորվել են «միջանկյալ» շահութաբաժին հասկացության մեջ:

Միջանկյալ շահութաբաժինների վճարման մասին որոշումն ընդունվում է խորհրդի կողմից, որը նշանակում է միջանկյալ շահութաբաժինների վճարման ամսաթիվ: Վերջինս պետք է լինի ոչ շուտ, քան տվյալ որոշման ընդունման պահից 30 օր անց: Միջանկյալ շահութաբաժիններ վճարվում են այն բաժնետերերին, որոնք ընդգրկվել են ընկերության բաժնետերերի ռեեստրում ընկերության խորհրդի միջանկյալ շահութաբաժիններ վճարելու մասին որոշման կայացման օրվանից առնվազն 10 օր առաջ: Միջանկյալ շահութաբաժինների չափը չի կարող գերազանցել նախորդ ֆինանսական տարվա արդյունքներով բաշխված շահութաբաժնի 50 տոկոսը:

Տարեկան շահութաբաժինների մասին որոշումն ընդունվում է ընկերության տարեկան ընդհանուր ժողովի կողմից՝ խորհրդի առաջարկությամբ: Ժողովը սահմանում է շահութաբաժինների չափը, վճարման կարգը, ամսաթիվը: Տարեկան շահութաբաժինները վճարվում են այն բաժնետերերին, որոնք ընդգրկվել են ընկերության բաժնետերերի ռեեստրում ընկերության տարեկան ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմելու օրվա դրությամբ: Ընկերության ընդհանուր ժողովին մասնակցած բաժնետերերի ձայների պարզ մեծամասնությամբ կարող է որոշում ընդունել բաժնետոմսերի դիմաց շահութաբաժիններ չվճարելու մասին: Նման դեպքերում

բաժնետերերն իրավունք չունեն դատական կարգով պահանջել դրանց վճարումը կամ ընկերությանը սնանկ ճանաչել, քանի որ որոշումը կայացվել է բաժնետերերի կողմից:

Շահութաբաժիններին հատկացվող գումարների ստացման իրավունք ունեն անվանական սեփականատերերը: Անվանական սեփականատերերի մոտ գրանցված իրական սեփականատերերի նկատմամբ իր պարտավորությունները կատարելու համար ընկերությունը անվանական սեփականատիրոջից կարող է պահանջել վերջիններիս ցուցակը կամ անվանական սեփականատիրոջ մոտ գտնվող բաժնետոմսերին համապատասխան փոխանցել գումար՝ անվանական սեփականատիրոջ կողմից շահութաբաժինների վճարումն ապահովելու համար:

Տարեկան շահութաբաժինները վճարվում են ընկերության ընդհանուր ժողովի կողմից սահմանված տարեկան շահութաբաժինների և տվյալ տարում արդեն վճարված միջանկյալ շահութաբաժինների գումարի տարբերությանը համապատասխան: Եթե ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի որոշմամբ տարեկան շահութաբաժինների չափը սահմանվում է արդեն վճարված միջանկյալ շահութաբաժինների չափին հավասար, ապա այդ բաժնետոմսերի դիմաց տարեկան շահութաբաժիններ չեն վճարվում:

Շահութաբաժինների վճարման ժամանակ կիրառվում է նախապատվության սկզբունք: Առաջին հերթին վճարվում են արտոնյալ բաժնետոմսերի դիմաց շահութաբաժինները, որոնք սահմանվում են դրամական գումարի տեսքով կամ որպես տոկոսադրույք՝ արտոնյալ բաժնետոմսերի անվանական արժեքի նկատմամբ: Ընկերության կանոնադրությամբ պետք է սահմանվեն ընկերության յուրաքանչյուր ձևի արտոնյալ բաժնետոմսերի դիմաց վճարվող շահութաբաժինները, ինչպես նաև վերջիններիս վճարման հերթականությունը: Եթե ընկերության կանոնադրությամբ սահմանվում է արտոնյալ բաժնետոմսերի շահութաբաժինների որոշման կարգը, ապա շահութաբաժնի չափը համարվում է որոշված: Եթե ընկերության կանոնադրությունը չի սահմանում արտոնյալ բաժնետոմսերի դիմաց վճարվող շահութաբաժնի չափը, ապա դրանց սեփականատերերն ունեն սովորական բաժնետոմսերի սեփականատերերի հետ շահութաբաժին ստանալու հավասար իրավունք:

Չնայած այն հանգամանքի, որ ընկերության կանոնադրությամբ կարող է սահմանվել արտոնյալ բաժնետոմսերի յուրաքանչյուր տեսակի շահութաբաժինների չափը՝ ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովը կարող է որոշում կայացնել վերջիններիս դիմաց վճարվող շահութաբաժինները ոչ լրիվ չափով վճարելու մասին: Այդ որոշման գործողության ժամկետը չի կարող մեկ տարուց ավելի լինել: Ընկերության բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովից հետո, որում որոշում է ընդունվել արտոնյալ բաժնետոմսերի դիմաց շահութաբաժիններ չվճարելու կամ ոչ լրիվ չափով վճարելու մասին՝ այդ բաժնետոմսերի սեփականատերերն ձեռք են բերում ձայնի իրավունք և կարող են մասնակցել ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովին: Սկսած տվյալ ձևի արտոնյալ բաժնետոմսերի դիմաց լրիվ ծավալով շահութաբաժինների առաջին վճարումից այդ իրավունքը դադարում է գործել: Երեք հաջորդական տարիների ընթացքում արտոնյալ բաժնետոմսերին հասանելիք շահութաբաժիններ չվճարելը կարող է հիմք հանդիսանալ ընկերությունը դատական կարգով լուծարելու համար:

Միաժամանակ, եթե ընկերության սովորական բաժնետոմսերի տարեկան շահութաբաժինը գերազանցում է արտոնյալ բաժնետոմսերի համար ընկերության կանոնադրությամբ սահմանված շահութաբաժինը, արտոնյալ բաժնետոմսերի սեփականատերերը ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի որոշմամբ կարող են ստանալ սովորական բաժնետոմսերի հասանելիք փաստացի շահութաբաժինը:

***Շահութաբաժինների վճարման օրենսդրական սահմանափակումները
Հայաստանում***

Համաձայն Օրենքի ընկերությունն իրավունք չունի հայտարարել տեղաբաշխված բաժնետոմսերի շահութաբաժինների վճարման մասին, եթե՝

- լրիվ չի վճարվել ընկերության կանոնադրական կապիտալը.
- ընկերության կողմից հետ չեն գնվել բոլոր այն բաժնետոմսերը, որոնք պետք է հետ գնվեին.
- շահութաբաժիններ վճարելու որոշումն ընդունելու պահի դրությամբ ընկերության տնտեսական վիճակը համապատասխանում է օրենքով սահմանված անվճարունակության հայտանիշներին, կամ նշված հայտանիշներն ի հայտ կգան շահութաբաժինների վճարման հետևանքով.
- ընկերության գուտ ակտիվների արժեքը փոքր է ընկերության կանոնադրական կապիտալի և պահուստային հիմնադրամի գումարից կամ այդ գումարից փոքր կդառնա շահութաբաժինների վճարման հետևանքով:

Որպես առանձին սահմանափակում կարելի է դիտարկել պահուստային հիմնադրամի ձևավորումը, քանի որ այն դեպքում, երբ նշված հիմնադրամը կազմում է ընկերության կանոնադրությամբ սահմանվածից ավելի փոքր մեծություն, ապա ընկերությունը պարտավոր է այդ հիմնադրամին շահույթից հատկացումներ կատարել առնվազն վերջինիս 5 տոկոսի չափով:

3.2 Բաժնետիրական ընկերության լուծարման դեպքում գույքից իր հասանելիք մասը ստանալու բաժնետիրոջ իրավունքը

Բաժնետիրոջ այս իրավունքը դասվում է գույքային իրավունքների շարքը և ի հայտ է գալիս ընկերության լուծարման ժամանակ: Սակայն այս իրավունքը կարող է իրականացվել միայն այն դեպքում, երբ բաժնետիրական ընկերության լուծարումից և նրա բոլոր պարտատերերի պահանջները բավարարելուց հետո ընկերության տրամադրության տակ գույք է մնում:


Ընդհանուր առմամբ բաժնետիրական ընկերության լուծարման գործընթացը ներկայացված է 1-ին գծապատկերում:

Պարտատերերի պահանջները բավարարելուց հետո ընկերության մնացած գույքը բաշխվում է բաժնետերերի միջև հետևյալ հաջորդականությամբ՝

- առաջին հերթին կատարվում են վճարումներն այն բաժնետոմսերի դիմաց, որոնք պետք է հետ գնվեն.
- երկրորդ հերթին կատարվում են վճարումներ արտոնյալ բաժնետոմսերի համար հաշվառված, բայց չվճարված շահութաբաժինները.
- երրորդ հերթին կատարվում են արտոնյալ բաժնետոմսերի լուծարային արժեքի վճարումները.
- չորրորդ հերթին կատարվում է լուծարվող ընկերության մնացած գույքի բաշխումը սովորական և բոլոր տեսակների արտոնյալ բաժնետոմսերի տերերի միջև:

Գույքի հերթական բաշխումն իրականացվում է նախորդ հերթի լրիվ բաշխումն ավարտելուց հետո: Ընկերության արտոնյալ բաժնետոմսերի առանձին տեսակների լուծարային արժեքի վճարումներն իրականացվում են ընկերության կանոնադրությամբ սահմանված հերթականությամբ: Եթե ընկերության տրամադրության տակ գտնվող գույքը չի բավարարում արտոնյալ բաժնետոմսերի համար հաշվառված, բայց չվճարված շահութաբաժինները բոլոր բաժնետերերին վճարելու համար, ապա գույքը բաշխվում է բաժնետերերի միջև՝ նրանց պատկանող նման տեսակի բաժնետոմսերի քանակին համամասնաբար:

Եթե ընկերության տրամադրության տակ գտնվող գույքը չի բավարարում ընկերության կանոնադրությամբ սահմանված արտոնյալ բաժնետոմսերի լուծարային արժեքը բոլոր բաժնետերերին վճարելու համար, ապա գույքը բաշխվում է բաժնետերերի միջև՝ նրանց պատկանող նման տեսակի բաժնետոմսերի քանակին համամասնաբար:



Գծապատկեր 1

3.3 Բաժնետիրական ընկերության կառավարմանը մասնակցելու բաժնետիրոջ իրավունքը

Բաժնետիրական ընկերության կառավարմանը մասնակցելու իրավունքը, ինչպես արդեն նշվել է, հանդիսանում է ոչ գույքային իրավունք: Այն բաժնետիրոջ կողմից իրականացվում է բաժնետերերի ընդհանուր ժողովին, ինչպես նաև կառավարման և վերստուգող մարմինների աշխատանքներին մասնակցելու միջոցով:

Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունքն իրենից ներկայացնում է իրավունքների մի ամբողջ համակարգ, որն իր մեջ ընդգրկում է.

- բաժնետերերի ընդհանուր ժողովի նախապատրաստմանը (օրակարգի վերաբերյալ առաջարկությունների ներկայացում, ընկերության կառավարման և

վերաստուգող մարմիններում անդամության թեկնածությունների առաջարկում) մասնակցելու իրավունքը.

- բաժնետերերի ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունքը.
- բաժնետերերի ընդհանուր ժողովում քվեարկությանը մասնակցելու իրավունքը.
- քվեարկության արդյունքներին և ընդհանուր ժողովի արձանագրություններին ու որոշումներին ծանոթանալու իրավունքը.
- բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողովի գումարման պահանջ ներկայացնելու իրավունքը:

Բաժնետերերի ընդհանուր ժողովի նախապատրաստմանը մասնակցելու իրավունք

Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովն ընկերության կառավարման բարձրագույն մարմինն է: Բաժնետիրական ընկերությունը կարող է գումարել ինչպես տարեկան, այնպես էլ արտահերթ ընդհանուր ժողովներ: Ընկերությունը պարտավոր է ամեն տարի գումարել բաժնետերերի ընդհանուր ժողով:

Առաջին տարեկան ժողովը գումարվում է առաջին ֆինանսական տարվա ավարտից հետո: Տարեկան ժողովի գումարման ժամկետները սահմանվում են Ընկերության կանոնադրությամբ և պետք է լինի ոչ ուշ, քան ընկերության հերթական ֆինանսական տարվա ավարտից հետո վեց ամսվա ընթացքում:

Բաժնետերը կարող է մասնակցել ընդհանուր ժողովի նախապատրաստմանը ժողովի օրակարգի և խորհրդի ու վերստուգող հանձնաժողովի անդամության թեկնածուների վերաբերյալ առաջարկություններ ներկայացնելու միջոցով: Դրանց ներկայացման ժամկետի ավարտը Օրենքով սահմանվում է ֆինանսական տարվա ավարտից հետո 30 օրվա ընթացքում, սակայն հնարավոր է, որ կանոնադրությամբ սահմանվի ավելի երկար ժամկետ: Այս իրավունքից կարող է օգտվել միայն բաժնետերը, որը ընկերության ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի առնվազն 2%-ի սեփականատերն է:

Առաջարկությունները ներկայացվում են գրավոր՝ նշելով հարցի առաջարկման հիմքերը, հարցը օրակարգ մտցնող բաժնետիրոջ ԱԱ (անվանումը), նրան պատկանող բաժնետոմսերի քանակը՝ ըստ բաժնետոմսերի տեսակների և դասերի, առաջարկության հեղինակի (հեղինակների) ստորագրությունը կամ դրա ֆաքսիմիլային վերարտադրությունը, պահանջը ներկայացնելու ամսաթիվը: Բաժնետերն իրավունք ունի բաժնետերերի ընդհանուր ժողովի օրակարգի վերաբերյալ ներկայացնել երկուսից ոչ ավելի առաջարկություններ:

Ընկերության խորհրդի և վերստուգող հանձնաժողովի անդամության թեկնածուների վերաբերյալ առաջարկություններ ներկայացնելիս նշված տվյալներին ավելանում են առաջադրվող թեկնածուի անվան, նրա ընկերության բաժնետեր լինելու կամ չլինելու փաստի, նրան պատկանող ընկերության բաժնետոմսերի քանակի մասին տվյալները: Ընկերության խորհուրդը պարտավոր է քննարկել ներկայացված առաջարկները և որոշում կայացնել դրանք ընդունելու կամ մերժելու մասին: Ի դեպ, որոշումը պետք է ընդունվի վերոնշյալ ժամկետը լրանալուց 15 օրվա ընթացքում: Խորհուրդը կարող է մերժել ներկայացրած առաջարկները, եթե.

- առաջարկ ներկայացրած բաժնետիրոջ կողմից խախտվել են առաջարկի ներկայացման ժամկետները.
- առաջարկ ներկայացրած բաժնետերը չի հանդիսանում ընկերության բաժնետոմսերի առնվազն 2 %-ի սեփականատեր.
- ընկերության բաժնետիրոջ կողմից առաջարկված հարցերը չեն վերաբերում ընկերության ընդհանուր ժողովի իրավասությանը.
- առաջարկը չի համապատասխանում օրենսդրության պահանջներին:

Մերժման մասին որոշումը ուղարկվում է առաջարկը ներկայացրած բաժնետերերին որոշումն ընդունելու պահից երեք օրվա ընթացքում:

Բաժնետերերի ժողովին մասնակցելու իրավունք

Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովին մասնակցում են միայն այն բաժնետերերը, որոնք ընդգրկվել են ընդհանուր ժողովում մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակում, որը հաստատվում է ընկերության խորհրդի կողմից: Բաժնետերերի ցուցակը կազմվում է ընկերության բաժնետերերի ռեեստրի տվյալների հիման վրա՝ խորհրդի կողմից սահմանված ամսաթվի դրությամբ: Այն չի կարող լինել ավելի վաղ, քան ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի գումարման մասին որոշման ամսաթիվը և չի կարող մինչև ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի գումարման ամսաթիվը 60 օրից ավելի լինել: Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակում փոփոխությունները հնարավոր են միայն ցուցակի կազմման ընթացքում թույլտրված սխալներն ուղղելու կամ դրանում չընդգրկված բաժնետերերի խախտված օրինական իրավունքներն ու շահերը վերականգնելու նպատակով: Ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակում ընկերության բաժնետերերի ռեեստր վարողը պարտավոր է փոփոխություններ կատարել դատարանի օրինական ուժի մեջ մտած որոշման հիման վրա:

Ընկերության բաժնետերերը բաժնետերերի ընդհանուր ժողովում մասնակցելու իր իրավունքը կարող է իրականացնել ինչպես անձամբ, այնպես էլ լիազորված ներկայացուցչի միջոցով: Եթե բաժնետոմսը մի քանի անձանց ընդհանուր սեփականություն է, ապա ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովում մասնակցելու իրավունքը տրվում է այն անձին, որի անունով բաժնետոմսը գրանցված է ընկերության բաժնետոմսերի ռեեստրում: Բաժնետիրոջ ներկայացուցիչը կարող է մասնակցել ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովում միայն լիազորագրի առկայության դեպքում: Անկախ իր կողմից ներկայացուցիչներին տրված լիազորագրերի, բաժնետերը պահպանում է ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովում մասնակցելու առաջնայնության իր իրավունքը:

Եթե բաժնետիրոջ կողմից տրվել է մի քանի լիազորագիր, ապա ուժի մեջ է համարվում ավելի ուշ տրված լիազորագիրը: Ընկերության ժողովում մասնակցելու համար բաժնետերը կարող է լիազորել այլ ներկայացուցչի: Այն դեպքում, երբ ընկերության բաժնետերն իրավաբանական անձ է, ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովին մասնակցում է նրա օրինական ներկայացուցիչը:

Եթե ընկերության բաժնետոմսերը փոխանցվել են ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովում մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմելու ամսաթվից հետո, սակայն մինչև ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի գումարման ամսաթիվը, ապա ցուցակում ընդգրկված բաժնետերը պարտավոր է իրենից բաժնետոմսեր ստացած անձին տրամադրել լիազորագիր կամ ընդհանուր ժողովում քվեարկել բաժնետոմսերի նոր սեփականատիրոջ ցուցումներին համաձայն: Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովին խորհրդակցական ձայնի իրավունքով կարող են ներկա գտնվել ընկերության բաժնետեր չհանդիսացող ընկերության տնօրենների խորհրդի կամ գործադիր մարմնի անդամներ:

Բաժնետերերի ցուցակը կազմելիս ընկերության ռեեստրում գրանցված անվանական սեփականատերը պարտավոր է ցուցակը կազմելու ամսաթվի դրությամբ տվյալներ տրամադրել այն անձանց մասին, որոնք իր մոտ գրանցվել են որպես իրական սեփականատեր: Եթե բաժնետոմսը հանձնվել է լիազորագրային կառավարման, ապա բաժնետերերի ցուցակում ընդգրկվում է բաժնետոմսի սեփականատիրոջ օգտին տվյալ արժեքուղթը կառավարելու իրավունք ունեցող անձի՝ լիազորագրային կառավարչի, անվանումը (ԱԱ): Ընկերության բաժնետերերը, ինչպես նաև խորհրդակցական ձայնով ընկերության ընդհանուր ժողովում մասնակցելու իրավունք ունեցող անձինք, պետք է ծանուցվեն ընկերության ընդհանուր ժողովի գումարման մասին:

Ծանուցման ձևը, այդ թվում նաև մամուլի այն միջոցը, որում պետք է հրապարակվի ծանուցման ձևը, սահմանվում է ընկերության կանոնադրությամբ կամ ժողովի որոշմամբ: Եթե ընկերության կանոնադրությունը այդ մասին տեղեկություն չի պարունակում, ապա ծանուցումը կատարվում է ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք ունեցող անձանց պատվիրված նամակ ուղարկելու միջոցով կամ անձամբ հանձնելով: Վերջինիս հետ 500 ավելի բաժնետեր ունեցող ընկերությունների դեպքում բաժնետիրոջը տրամադրվում է նաև տվյալ ժողովի քվեաթերթիկները: Ընկերության կանոնադրությունը պետք է պարունակի դրույթները ժողովի գումարման մասին ծանուցելու ժամկետների վերաբերյալ: Բաց բաժնետիրական ընկերությունների դեպքում բաժնետերերը պետք է ծանուցվեն ժողովի գումարման օրվանից առնվազն 15 օր առաջ:

Ծանուցումը պետք է բովանդակի.

- ընկերության անվանումը և գտնվելու վայրը.
- ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի գումարման տարին, ամիսը, ամսաթիվը, ժամը և վայրը.
- ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմելու տարին, ամիսը, ամսաթիվը.
- ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի օրակարգում ընդգրկված հարցերը.
- ընդհանուր ժողովը նախապատրաստելու ընթացքում նրանում քննարկվող նյութերի և փաստաթղթերի հետ ծանոթացման կարգը: Տարեկան ընդհանուր ժողովը նախապատրաստելու ընթացքում նման փաստաթղթերի թվին են դասվում. ընկերության տարեկան հաշվետվությունը, ընկերության տարեկան ֆինանսատնտեսական գործունեության արդյունքների վերաբերյալ ընկերության վերստուգող հանձնաժողովի (վերստուգողի) և աուդիտն իրականացնող անձի եզրակացությունը, տեղեկություններ խորհրդի, վերստուգող հանձնաժողովի (վերստուգողի) առաջադրվող թեկնածուների մասին, իսկ կանոնադրության փոփոխությունների և լրացումների կամ կանոնադրությունը նոր խմբագրությամբ հաստատելու դեպքում՝ նաև դրանց նախագծերը:

Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովը հեռակա քվեարկությամբ գումարելիս ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բոլոր բաժնետերերին քվեաթերթիկների և ժողովի օրակարգի հետ մեկտեղ առաքվում են նշված փաստաթղթերը:

Եթե ընկերության բաժնետերերի ռեեստրում գրանցված է անվանական սեփականատեր, ապա ընկերության ընդհանուր ժողովի գումարման ծանուցումն ուղղվում է նրան: Անվանական սեփականատերն իր հերթին պարտավոր է ժողովի հրավիրման մասին ծանուցել բաժնետոմսերի իրական սեփականատերերին: ՀՀ օրենսդրությամբ բաժնետոմսերի անվանական սեփականատեր է համարվում այն անձը, որի անունով՝ պայմանագրի համաձայն, ռեեստրում գրանցվում են այլ անձանց բաժնետոմսերը, և որը չի հանդիսանում այդ բաժնետոմսերի սեփականատերը: ՀՀ օրենսդրությամբ չեն առանձնացվում արժեթղթերի շուկայի այն մասնակիցները, որոնք կարող են հանդես գալ որպես անվանական սեփականատեր, մինչդեռ համաշխարհային փորձը ցույց է տալիս, որ այդ մասնակիցներն են արժեթղթերի շուկայում որպես պահառու հանդես եկող կազմակերպությունները:

Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովում բաժնետերերի մասնակցության փաստով որոշվում է բաժնետերերի ընդհանուր ժողովի իրավասությունը: Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովն իրավասու է, այսինքն ունի քվորում, եթե ընդհանուր ժողովի մասնակիցների գրանցման ավարտի պահին գրանցվել են ընկերության ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի 50-ից ավելի տոկոսին տիրապետող բաժնետերերը: Եթե քվորումը բացակայում է, հայտարարվում է նոր ժողովի հրավիրման ամսաթիվը: Այս դեպքում օրակարգում փոփոխությունները արգելվում են: Ընկերության բաժնետերերի

չկայացած ընդհանուր ժողովի փոխարեն գումարվող նոր ժողովն իրավասու է, եթե մասնակիցների գրանցման ավարտի պահին գրանցվել են ընկերության ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի 30-ից ավելի տոկոսին տիրապետող բաժնետերերը: Եթե նոր ժողովի հրավիրման ամսաթիվը տեղափոխվում է 20 օրից պակաս ժամկետով, ապա այդ ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի նոր ցուցակ չի կազմվում:

Բաժնետերերի ընդհանուր ժողովում քվեարկությանը մասնակցելու իրավունքը

Բաժնետոմսի հատկանշական առանձնահատկությունն իր սեփականատիրոջը ձայնի իրավունքով օժտելն է, իսկ դա նշանակում է, որ բաժնետոմսի սեփականատերը հնարավորություն է ստանում մասնակցել ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովում դրված հարցերի քվեարկությանը: Հարկ է նշել, որ բացառություն են կազմում շահագրգիռ անձ հանդիսացող բաժնետերերը, որոնք չեն մասնակցում շահագրգռվածության առկայությամբ գործարքների կնքման մասին որոշումների ընդունմանը:

Բաժնետերերի ընդհանուր ժողովում ձայնի իրավունքից օգտվում են՝

- ընկերության սովորական բաժնետոմսերի սեփականատեր հանդիսացող բաժնետերերը;
- ընկերության արտոնյալ բաժնետոմսերի սեփականատեր հանդիսացող բաժնետերերը՝ Օրենքով և ընկերության կանոնադրությամբ սահմանված դեպքերում:

Ձայնի իրավունքն ունի իր ձևակերպումը: Քանակական տեսանկյունից այն հանգում է «մեկ քվեարկող բաժնետոմս՝ մեկ ձայն» սկզբունքին, իհարկե բացառությամբ այն դեպքերի, երբ կիրառվում է քվեարկության գումարային (կումուլյատիվ) սկզբունքը: Համաձայն Օրենքի քվեարկության գումարային տարբերակը կիրարկվում է միայն ընկերության խորհրդի ընտրության ժամանակ: Այսպես, հինգ հարյուրից ավելի բաժնետեր ունեցող ընկերությունում խորհրդի ընտրություններն իրականացվում են գումարային քվեարկությամբ: Հինգ հարյուրից պակաս բաժնետեր ունեցող ընկերությունում խորհրդի ընտրությունները կարող են իրականացվել գումարային քվեարկությամբ, եթե այդ մասին նշված է ընկերության կանոնադրության մեջ:

Քվեարկության գումարային տարբերակը իր բնույթով նպաստում է, որպեսզի ընկերության կառավարմանը ակտիվ մասնակցություն ունենան փոքր բաժնետերերը: Քվեարկության գումարային սկզբունքի դեպքում բաժնետերը կարող է ունենալ ավելի շատ ձայն, քան տիրապետում է և տեղաբաշխել այն իր հայեցողությամբ, ցանկացած համամասնությամբ:

Բաժնետիրոջ տրամադրության տակ գտնվող ձայների ընդհանուր քանակը որոշվում է որպես ընտրվող թեկնածուների թվի և բաժնետիրոջ բաժնետոմսերի ընդհանուր քանակի արտադրյալ: Օրինակ, եթե բաժնետերը տնօրինում է 100 բաժնետոմսի և պետք է ընտրվի խորհրդի 7 անդամ, ապա բաժնետերը իր 700 ձայնը կարող է տրամադրել մեկ թեկնածուի կամ բաշխել մի քանի թեկնածուների միջև:

Որակական տեսանկյունից՝ ձայնի իրավունքը բաժնետիրոջը հնարավորություն է տալիս մասնակցել ընկերության կառավարմանը:

Բաժնետիրոջ ձայնի իրավունքն անմիջականորեն առնչվում է քվեարկության հետ, քանի որ վերջինիս միջոցով է բաժնետերն արտահայտում իր կամքը: Տարբերվում են համատեղ ներկայությամբ և հեռակա կարգով քվեարկության ձևերը: Առաջին ձևի դեպքում բաժնետերերի ընդհանուր ժողովի իրավասությանը պատկանող հարցերը քննարկվում և վերջիններիս վերաբերյալ որոշումներն ընդունվում են ընկերության ժողովին բաժնետերերի համատեղ մասնակցությամբ: Հեռակա կարգով քվեարկման առանձնահատկությունը կայանում է նրանում, որ ընդհանուր ժողովի իրավասությանը վերաբերող հարցերը քննարկվում և լուծում են ստանում քվեաթերթիկներով հարցման միջոցով: Հարկ է նշել, որ հեռակա կարգով քվեարկությամբ չի կարող որոշում ընդունվել ընկերության տարեկան հաշվետվությունների, հաշվապահական հաշվեկշիռների, շահույթների և վնասների հաշվի

հաստատման մասին, այսինքն քվեարկության այս ձևը կարող է կիրառվել միայն արտահերթ ընդհանուր ժողովների դեպքում:

Քվեարկությանը մասնակցելու եղանակը բաց բաժնետիրական ընկերություններում քվեաթերթիկներն են: Համաձայն Օրենքի քվեաթերթիկները պետք է բովանդակեն.

- ընկերության անվանումը.
- ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի գումարման տարին, ամիսը, ամսաթիվը, վայրը և ժամը.
- քվեարկության դրվող յուրաքանչյուր հարցի ձևակերպումը և նրա քննարկման հերթականությունը.
- քվեարկության դրվող յուրաքանչյուր հարցի վերաբերյալ քվեարկության տարբերակները՝ «կողմ», «դեմ», «ձեռնպահ».
- եթե բաժնետերը քվեարկում է հեռակա կարգով, ապա լրացված քվեաթերթիկները Ընկերության կողմից ընդունելու տարին, ամիսը, ամսաթիվը, ժամը և վայրը.
- ցուցում այն մասին, որ քվեաթերթիկը պետք է ստորագրվի բաժնետիրոջ (ներկայացուցչի) կողմից.
- քվեաթերթիկը լրացնելու կարգի պարզաբանումը:

Խորհրդի, վերստուգող հանձնաժողովի (վերստուգողի) ընտրության դեպքում քվեաթերթիկը պետք է թեկնածուների անունից բացի, պարունակի նրանց անհատականացնող այլ տվյալներ (օրինակ՝ անձնագրային տվյալներ, հասցե):

Քվեաթերթիկի ձևը և բովանդակությունը հաստատվում է ընկերության խորհրդի որոշմամբ և վերոհիշյալ պայմաններից բացի կարող է պարունակել նաև այլ պայմաններ:

Քվեաթերթիկի միջոցով քվեարկման դեպքում հաշվառվում են ձայներն այն հարցերի վերաբերյալ, որտեղ քվեարկողի կողմից թողնված է քվեարկման միայն մեկ տարբերակ: Եթե նշված պահանջը խախտվել է, քվեաթերթիկը ճանաչվում է անվավեր և ձայների հաշվառման ժամանակ հաշվի չեն առնվում: Եթե քվեաթերթիկը բովանդակում է քվեարկության դրված մի քանի հարցեր, նշված պահանջի խախտումը մեկ կամ մի քանի հարցի նկատմամբ չի բերում ամբողջ քվեաթերթիկի անվավեր ճանաչելուն:

Քվեարկության և ընդհանուր ժողովի արձանագրություններին ու որոշումներին ծանոթանալու իրավունք

Ընկերության բաժնետերերն իրավունք ունեն ծանոթանալ ինչպես քվեարկության արդյունքների, այնպես էլ ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի արձանագրություններին: Առաջինը կազմվում է հաշվիչ հանձնաժողովի կամ հանձնաժողովի գործառույթները կատարող անձի կողմից: Այս արձանագրությունը ստորագրվում է հաշվիչ հանձնաժողովի անդամների կամ հանձնաժողովի գործառույթները կատարող անձի կողմից, որից անմիջապես հետո քվեաթերթիկները զմռսվում են և հանձնվում ընկերության արխիվ պահպանման: Ինչ վերաբերում է ժողովի արձանագրությանը, ապա այն կազմվում է ընդհանուր ժողովի ավարտից 5 օրվա ընթացքում առնվազն երկու օրինակով: Այն պետք է ստորագրված լինի ժողովի նախագահի և քարտուղարի կողմից:

Արձանագրության մեջ նշվում է.

- ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի տարին, ամիսը, ամսաթիվը և վայրը.
- ընկերության տեղաբաշխված քվեարկող բաժնետոմսերի ձայների գումարային քանակը.
- ընկերության ընդհանուր ժողովին մասնակցած բաժնետերերի բաժնետոմսերի ձայների գումարային քանակը.
- ժողովի օրակարգը, նախագահի և քարտուղարի ստորագրությունները:

Արձանագրությունը պետք է բովանդակի ժողովում կայացած ելույթների հիմնական դրույթները, քվեարկության դրված հարցերը, այդ հարցերի վերաբերյալ քվեարկության արդյունքները, ժողովի կողմից ընդունված որոշումները:

Բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողովի գումարման պահանջ ներկայացնելու իրավունք

Ընկերության բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողովի գումարման համար առիթ կարող են ծառայել ընկերության համար «անհետաձգելի հարցերի» վերաբերյալ որոշումների ընդունումը: Այսպես կոչված «անհետաձգելի հարցերի» շրջանակը Օրենքը չի սահմանում, սակայն այն միաժամանակ դրույթներ է պարունակում բաժնետերերի ընդհանուր ժողովի բացառիկ իրավասությունների մասին, որից հետևում է, որ ընկերության բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողով կարող է գումարվել միայն այդ իրավասությունների շրջանակներում գտնվող հարցերին լուծում տալու նպատակով: Արտահերթ ընդհանուր ժողովներ սովորաբար գումարվում են ընկերության տնօրենների խորհրդի որոշմամբ՝ սեփական նախաձեռնությամբ, վերստուգող հանձնաժողովի, ընկերության աուդիտն իրականացնող անձի կողմից: Արտահերթ ընդհանուր ժողովի գումարում պահանջելու իրավունք ունի ներկայացնել նաև ներկայացման օրվա դրությամբ առնվազն 10% ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի սեփականատերը (սեփականատերերը):

Բաժնետիրոջ կողմից ներկայացված պահանջը պետք է բովանդակի՝

- բաժնետիրոջ (բաժնետերերի) Ա. Ա. (անվանումը).
- բաժնետիրոջը (բաժնետերերին) պատկանող բաժնետոմսերի քանակը՝ ըստ բաժնետոմսերի տեսակի և ձևերի.
- բաժնետիրոջ նշված քանակի բաժնետոմսերի սեփականության իրավունքը հավաստող փաստաթուղթը.
- պահանջը ներկայացնելու ամսաթիվը.
- հարցերը, որոնք առաջարկվում են ընդգրկել արտահերթ ընդհանուր ժողովի օրակարգում, ինչպես նաև այդ հարցերի քննարկման անհրաժեշտության հիմնավորումը.
- ժողովի գումարման ձևը (համատեղ ներկայությամբ կամ հեռակա կարգով քվեարկության միջոցով):

Բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողով գումարելու պահանջը պետք է ստորագրված լինի ժողովը գումարել պահանջող բաժնետիրոջ կողմից:

Ընկերության խորհուրդը իրավունք չունի փոփոխություններ մտցնել բաժնետիրոջ կողմից առաջարկվող օրակարգում: Ընկերության խորհուրդը իր կամքով չի կարող փոխել նաև արտահերթ ժողովի գումարման ձևը, եթե ներկայացված պահանջը ցուցում է պարունակում բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողովի գումարման ձևի մասին: Հակառակ դեպքում, այսինքն, երբ ներկայացված պահանջը նման ցուցում չի բովանդակում, խորհուրդը կարող է առաջարկություն ներկայացնել բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողովի գումարման ձևի մասին և հարցը լուծել պահանջը ներկայացրած բաժնետիրոջ հետ բանակցությունների միջոցով: Պահանջի ներկայացման պահից 10 օրվա ընթացքում ընկերության խորհուրդը պետք է որոշում կայացնի այն ընդունելու կամ մերժելու մասին: Ընկերության բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողովի գումարման կամ դրա գումարումը մերժելու մասին ընկերության խորհրդի որոշումն ուղարկվում է պահանջը ներկայացրած բաժնետիրոջը (բաժնետերերին), ընդ որում՝ որոշման ընդունման պահից եռօրյա ժամկետում: Եթե ընկերության խորհուրդը որոշում է կայացնում բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողովը հրավիրելու մասին, ապա նա պարտավոր է գումարել ընկերության արտահերթ ընդհանուր ժողովի պահանջը ներկայացնելու պահից 45 օրվա ընթացքում: Խորհուրդը կարող է մերժել արտահերթ ընդհանուր ժողովի գումարման պահանջը, եթե՝

- խախտվել է ընկերության բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողովի գումարման պահանջը ներկայացնելու կարգը.
- ընկերության բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողովի գումարման պահանջը ներկայացրած բաժնետերը (բաժնետերերը) չի (չեն) տնօրինում ընկերության ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի 10 տոկոսին.
- ընկերության բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողովի օրակարգի հարցերից ոչ մեկը չի վերաբերում ընկերության ընդհանուր ժողովի իրավասությանը:

Եթե խորհուրդը ընկերության արտահերթ ընդհանուր ժողովի գումարման մասին որոշում չի ընդունում կամ որոշմամբ մերժում է ժողովի հրավիրման պահանջը, ապա ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովը կարող է հրավիրվել ժողովի գումարման մասին պահանջը ներկայացրած բաժնետիրոջ (բաժնետերերի) կողմից: Այս դեպքում ընկերության բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողովը կարող է որոշում ընդունել փոխհատուցել ժողովի գումարման հետ կապված ծախսերն ընկերության միջոցների հաշվին:

Կառավարման և վերստուգող մարմինների աշխատանքներին մասնակցելու բաժնետիրոջ իրավունքը

Ինչպես արդեն նշվել է, բաժնետերը կարող է մասնակցել բաժնետիրական ընկերության կառավարմանը ընկերության կառավարման և վերստուգող մարմինների աշխատանքներին մասնակցելու միջոցով: Իսկ դա հնարավոր է նշված մարմիններում ընտրվելու կամ նշանակվելու դեպքում:

Եթե բաժնետերերի ընդհանուր ժողովը հանդիսանում է ընկերության կառավարման բարձրագույն մարմինը, ապա խորհուրդն իրականացնում է ընկերության գործունեության ընդհանուր ղեկավարումը, իսկ գործադիր մարմինը (հանձինս՝ տնօրենի և վարչության) ընթացիկ գործունեության ղեկավարումը: Ինչ վերաբերում է ընկերության վերստուգող հանձնաժողովին (վերստուգողին), ապա այն իրականացնում է ընկերության ֆինանսատնտեսական գործունեության վերստուգումը:

Ընկերության խորհուրդը սովորաբար կազմավորվում է ընկերության բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովում մեկ տարի ժամկետով՝ նրա անդամների ընտրության կամ առանց ընտրության ընդգրկման միջոցով: Ընկերության խորհրդի անդամ կարող են լինել միայն գործունակ ֆիզիկական անձինք: Վերջիններս կարող են լինել ինչպես բաժնետեր, այնպես էլ ընկերության բաժնետեր չհանդիսացող անձինք, եթե դա արգելված չէ ընկերության կանոնադրությամբ:

Ընկերության խորհրդի անդամներն առաջադրվում են բաժնետերերի կողմից՝ տարեկան ընդհանուր ժողովի նախապատրաստման ընթացքում: Օրենսդրությունը բաժնետերերի ընդհանուր ժողովի օրակարգում կառավարման և վերստուգող մարմինների կազմում թեկնածուներ առաջադրելու իրավունք ունեցող բաժնետիրոջը չի պարտավորեցնում ստանալ թեկնածուի համաձայնությունը, սակայն հետագա ոչ ցանկալի իրավիճակներից խուսափելու համար վերջինիս խորհուրդ է տրվում տալ իր գրավոր համաձայնությունը:

Բացի այդ, ընկերության այն բաժնետերը (բաժնետերերը), որը (որոնք) ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմելու ամսաթվի դրությամբ տիրապետում է (են) ընկերության ձայնի իրավունք տվող տեղաբաշխված բաժնետոմսերի 10 և ավելի տոկոսին, իրավունք ունի (ունեն) առանց ընտրության ընդգրկվել ընկերության խորհրդի կազմում, կամ ընկերության խորհրդի կազմում նշանակել իր (իրենց) ներկայացուցչին: Յուրաքանչյուր բաժնետեր ընկերության խորհրդում կարող է զբաղեցնել մեկ տեղ: Ընկերության խորհրդի անդամների լիազորությունների ընդհանուր տևողությունը չի սահմանափակվում:

Ընկերության գործադիր մարմինների (տնօրենը և վարչությունը) ձևավորումը և դրանց լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը կատարվում է ընկերության

խորհրդի որոշմամբ, եթե ընկերության կանոնադրությամբ այդ հարցերը պատկանում են ընկերության խորհրդի իրավասությանը: Եթե ընկերության կանոնադրությամբ նախատեսված է ունենալ վարչություն, ապա կանոնադրությամբ պետք է սահմանազատվեն գործադիր տնօրենի և վարչության իրավասությունները: Ընկերության տնօրենը և վարչության անդամները կարող են բաժնետեր չլինել: Նրանց հետ պայմանագիրը կնքում է ընկերության խորհրդի նախագահը կամ ընկերության կանոնադրությամբ սահմանված այլ անձ: Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի որոշմամբ գործադիր մարմնի իրավասությունները կարող են փոխանցվել այլ կազմակերպությանը կամ անհատ կառավարչի: Այս դեպքում նշված կազմակերպության կամ անհատ կառավարչի հետ ընկերության խորհուրդը կնքում է համապատասխան պայմանագիր:

Ընկերության վերստուգող հանձնաժողովի անդամները (վերստուգողը) կարող են լինել ընկերության կառավարման մարմիններում չընդգրկված և ընկերության բաժնետեր հանդիսացող գործունակ ֆիզիկական անձինք: Անհրաժեշտ է նշել, որ ընկերության վերստուգող հանձնաժողովի անդամների (վերստուգողի) թեկնածուներին նույնպես խորհուրդ է տրվում տալ իրենց համաձայնությունը վերստուգող հանձնաժողովի անդամ (վերստուգող) ընտրվելու համար: Վերստուգող հանձնաժողովի անդամները (վերստուգողը) ընտրվում են ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի կողմից երեք տարի ժամկետով:

3.4 Բաժնետիրական ընկերության գործունեության վերաբերյալ տեղեկություններ և փաստաթղթեր ստանալու բաժնետիրոջ իրավունքը

ՀՀ օրենսդրությունը սահմանում է բաժնետիրական ընկերության կողմից բաժնետերերին տեղեկություններ և փաստաթղթեր տրամադրելու հետևյալ եղանակները.

- տեղեկությունների և փաստաթղթերի հրապարակային տրամադրում (բաց բաժնետիրական ընկերությունների կողմից տեղեկատվության հրապարակում).
- տեղեկությունների և փաստաթղթերի տրամադրում բաժնետերերի ընդհանուր ժողովին նախապատրաստվելիս.
- տեղեկությունների և փաստաթղթերի տրամադրում բաժնետիրոջ պահանջով:

Համաձայն Օրենքի յուրաքանչյուր բաց բաժնետիրական ընկերություն պարտավոր է հրապարակել՝

- ընկերության տարեկան հաշվետվությունը, հաշվապահական հաշվեկշիռը, շահույթի և վնասների հաշիվը.
- բաժնետոմսերի բաց բաժանորդագրության դեպքում՝ բաժնետոմսերի թողարկման ազդագիրը.
- ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովների գումարման մասին հայտարարությունը:

Ընկերության տարեկան հաշվետվությունը իրենից ներկայացնում է հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում ընկերության գործունեության մասին ընդհանրացնող տվյալներ պարունակող փաստաթուղթ: Այս փաստաթղթի բաղկացուցիչ մասն են հանդիսանում հաշվապահական հաշվեկշիռը, շահույթի և վնասների հաշվետվությունը: Վերջին փաստաթղթում արտացոլվում են հաշվետու ժամանակաշրջանում գուտ շահույթի ձևավորման մասին տեղեկությունները: Նշված փաստաթղթի դերը կարևորվում է նրանով, որ բաժնետիրական ընկերությունը հանդիսանում է առևտրային կազմակերպություն, որն իր գործունեության արդյունքում շահույթ ստանալու նպատակ է հետապնդում: Այդ իսկ պատճառով, ընկերության կառավարման մարմինները բաժնետերերի նկատմամբ առաջին հերթին հաշվետու են ստացվող շահույթների և դրանց օգտագործման ուղղությունների գծով: Հաշվապահական հաշվեկշիռը կազմվում է ֆինանսական տարվա համար: Օրենքը

սահմանում է, որ ընկերության գործադիր մարմինը պատասխանատվություն է կրում ընկերության հաշվապահական հաշվառման կազմակերպման, վիճակի և հավաստիության, տարեկան հաշվետվության, այն պետական կառավարման մարմիններին ժամանակին ներկայացնելու, ինչպես նաև ընկերության բաժնետերերին, պարտատերերին և զանգվածային լրատվության միջոցներին ընկերության մասին տրամադրվող տեղեկությունների համար:

Հարկ է նշել, որ ընկերության ֆինանսական հաշվետվությունները հրապարակելիս ՀՀ օրենսդրությունը պահանջում է նաև, որպեսզի դրանք ընկերության և նրա բաժնետերերի հետ գույքային շահով չկապված արհեստավարժ վերստուգիչի կողմից ենթարկվեն վերստուգման: Ցանկալի է, որ ֆինանսական հաշվետվության հետ միասին հրատարակվի նաև տեղեկատվություն այդ հաշվետվության աուդիտի արդյունքների վերաբերյալ:

Միաժամանակ «Արժեթղթերի շուկայի կարգավորման մասին» ՀՀ օրենքի հաշվետու թողարկող հանդիսացող բաժնետիրական ընկերությունները ՀՀ արժեթղթերի հանձնաժողովում պարտավոր են գրանցել իրենց արժեթուղթը՝ Հանձնաժողովին գրանցման հայտարարագիր ներկայացնելով: Վերջինս իր մեջ ներառում է.

ա) Տեղեկությունները թողարկողի կազմակերպական հարցերի և գործունեության տեսակի վերաբերյալ, որոնք ընդգրկում են.

- Թողարկողի մասին ընդհանուր տեղեկություններ.
- Տեղեկություններ թողարկողի գործունեության վերաբերյալ.
- Տեղեկություններ թողարկողի նախատեսվող գործունեության մասին:

բ) Տեղեկություններ թողարկողի հետ փոխկապակցված անձանց կազմակերպական հարցերի և գործունեության տեսակի վերաբերյալ, որոնք ընդգրկում են.

- Թողարկողի հետ փոխկապակցված անձանց մասին տեղեկություններ:

գ) Տեղեկություններ թողարկողի արժեթղթով նախատեսված պարտավորությունները կամ դրանց մի մասը երաշխավորված անձանց կազմակերպական հարցերի և գործունեության տեսակի վերաբերյալ, եթե անձը փոխկապակցված անձ է դարձել հետևյալ պայմանների համաձայն. 1) նրանցից որևէ մեկը մյուսի որոշումների վրա էականորեն ազդելու փաստացի կամ պայմանագրով ամրագրված հնարավորություն ունի, նրանցից մեկը հսկում է մյուսին կամ նրանք ընդհանուր հսկողության տակ են գտնվում. 2) նրանք տվյալ դեպքում գործել են համաձայնեցված՝ ելնելով ընդհանուր տնտեսական շահերից:

դ) Տեղեկություններ թողարկողի նախկինում թողարկած արժեթղթերի վերաբերյալ.

ե) Տեղեկություններ թողարկող արժեթղթերի վերաբերյալ.

զ) Տեղեկություններ թողարկողի կառավարմանը մասնակցող անձանց, տեղաբաշխողների, բաժնային արժեթղթերի նշանակալից սեփականատերերի մասին.

է) Տեղեկություններ այն անձանց մասին, որոնց թողարկողի կողմից սահմանված տարեկան վարձատրությունը գերազանցում է նվազագույն աշխատավարձի տասհազարապատիկը.

ը) Տեղեկություններ թողարկողի կողմից սահմանված պարզալվճարների, շահույթի բաշխման համաձայնությունների վերաբերյալ.

թ) Տեղեկություններ թողարկողի կնքած այն պայմանագրերի վերաբերյալ, որոնց գինը գերազանցում է նվազագույն աշխատավարձի տասհազարապատիկը.

ժ) Տեղեկություններ թողարկողի կողմից թողարկված արժեթղթերի նկատմամբ առկա օպցիոնների վերաբերյալ.

ժա) Թողարկողի ֆինանսական վիճակին վերաբերող տեղեկություններ, որոնք ներառում են թողարկողի արժեթղթի գրանցման տարվան նախորդող երեք ֆինանսական տարիների (անկախ աուդիտորի եզրակացության առկայությամբ) և գրանցման տարվա եռամսյակային հաշվապահական հաշվեկշիռները, ֆինանսական արդյունքների, սեփական կապիտալում փոփոխությունների և դրամական միջոցների մասին հաշվետվությունները, ինչպես նաև թողարկողի կառավարմանը մասնակցող առնվազն երկու անձի վերլուծությունները թողարկողի ֆինանսական վիճակի և գործունեության արդյունքների մասին, որոնք վերաբերում են ֆինանսական տարվա արդյունքներին, ներկայացնելով

տեղեկատվություն թողարկողի ակտիվների իրացվելիության, կապիտալի և գործունեության արդյունքների վերաբերյալ:

Այս բաժնում պահանջվում է ներկայացնել նաև նշված ցուցանիշների վերաբերյալ ցանկացած միտում, պատճառ, իրադարձություն: Կամ, եթե ֆինանսական հաշվետվությունները բացահայտում են զուտ հասույթի էական աճ, ապա անհրաժեշտ է ներկայացնել այդ աճի պատճառները: Միաժամանակ անհրաժեշտ է ներկայացնել այն ազդեցությունը, որ ունեցել են սղաճը և գների փոփոխությունը թողարկողի զուտ հասույթի և զուտ եկամտի վրա նրա գործունեության վերջին երեք տարիների ընթացքում կամ ավելի կարճ ժամանակահատվածում, եթե թողարկողը գործում է ավելի կարճ ժամանակահատվածում: Բացի այդ, յուրաքանչյուր հաշվետու թողարկող պարտավոր է ներկայացնել հաշվետվություններ, որոնք պետք է պարունակեն գրանցման հայտարարագրում ներառվող տեղեկությունների կամ դրանց կից ներկայացվող փաստաթղթերի արդիականությունը պահպանելու համար անհրաժեշտ տեղեկություններ և փաստաթղթեր: Միաժամանակ հաշվետու թողարկողի կողմից ներկայացման են ենթակա նաև տարեկան ֆինանսական հաշվետվությունները (անկախ ատոլիտորի եզրակացությամբ) և եռամսյակային ֆինանսական հաշվետվությունները: Ինչ վերաբերում է հաշվետու թողարկողի վերաբերյալ տեղեկությունների հրապարակայնության ապահովմանը, այն իրականացվում է ինչպես հաշվետու թողարկողի, այնպես էլ Հանձնաժողովի կողմից: Առաջին պայմանը գործում է, եթե հաշվետու թողարկողն ունի 500 և ավելի գրանցված սեփականատեր: Ինչ վերաբերում է երկրորդ պայմանին, ապա Հանձնաժողովն ինքն է պարտավոր իր որոշումներով սահմանված կարգով հասարակության համար մատչելի դարձնել հաշվետու թողարկողի վերաբերյալ տեղեկությունները, փաստաթղթերը, հաշվետվություններն ու հայտարարագրերը:

Ինչպես արդեն նշվել է, համաձայն Օրենքի՝ բաժնետերն իրավունք ունի տեղեկություններ և փաստաթղթեր ստանալ բաժնետերերի ընդհանուր ժողովին նախապատրաստվելու ընթացքում: Այդ տեղեկությունների և փաստաթղթերի շարքին են դասվում ինչպես ընկերության տարեկան հաշվետվությունը, ընկերության տարեկան ֆինանսատնտեսական գործունեության արդյունքների վերաբերյալ վերստուգող հանձնաժողովի և արհեստավարժ վերստուգողի եզրակացությունը, այնպես էլ տեղեկություններ ընկերության խորհրդում, վերստուգող հանձնաժողովում առաջադրվող թեկնածությունների մասին, ընկերության կանոնադրության փոփոխությունների և լրացումների նախագիծը կամ ընկերության կանոնադրությունը նոր խմբագրությամբ:

Բաժնետիրոջը տեղեկությունների և փաստաթղթերի տրամադրման երրորդ ձևը բաժնետիրական ընկերության մասին տեղեկությունների և փաստաթղթերի տրամադրումն է բաժնետիրոջ պահանջով: Բաժնետիրոջ պահանջով ընկերությունը հնգօրյա ժամկետում պարտավոր է նրան տրամադրել հետևյալ փաստաթղթերի պատճենները.

- ընկերության պետական գրանցման վկայականը, կանոնադրությունը և դրանում կատարված փոփոխությունները և լրացումները, կանոնադրությունը նոր խմբագրությամբ, ընկերության հիմնադրման մասին որոշումը և պայմանագիրը.
- ընկերության հաշվեկշռում արտացոլված գույքի նկատմամբ ընկերության գույքային իրավունքները հաստատող փաստաթղթերը.
- բաժնետերերի ընդհանուր ժողովի և ընկերության կառավարման այլ մարմինների հաստատած ընկերության ներքին փաստաթղթերը.
- ընկերության առանձնացված ստորաբաժանումների և հիմնարկների կանոնադրությունները.
- ընկերության տարեկան հաշվետվությունները.
- ընկերության բաժնետոմսերի թողարկման ազդագրերը.
- հաշվապահական հաշվառման փաստաթղթերը (հաշվապահական հաշվեկշիռները, շահույթի և վնասների հաշիվները, ատոլիտորական եզրակացությունները և այլն).

- պետական կառավարման մարմիններին ներկայացվող ֆինանսական և վիճակագրական հաշվետվության փաստաթղթերը.
- ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովների, խորհրդի, ընկերության վերստուգող հանձնաժողովի (վերստուգողի) արձանագրությունները.
- հաշվիչ հանձնաժողովի արձանագրությունները և քվեաթերթիկները.
- ընկերության վերստուգող հանձնաժողովի (վերստուգողի), ընկերության աուդիտն իրականացնող անձի, պետական և տեղական ինքնակառավարման մարմինների եզրակացությունները.
- ընկերության փոխկապակցված անձանց (նրանց պատկանող բաժնետոմսերի քանակի մասին նշումով(, ինչպես նաև նշանակալից և խոշոր բաժնետերերի ցուցակները.
- ընկերության կնքած պայմանագրերը:

Բացի դրանից, բաժնետերերին կարող են ներկայացվել նաև ընկերության այլ փաստաթղթեր՝ սահմանված Օրենքով, այլ իրավական ակտերով, ինչպես նաև ընկերության կանոնադրությամբ, նրա ներքին փաստաթղթերով, բաժնետերերի ժողովների որոշումներով, խորհրդի, ընկերության կառավարման այլ մարմիններով:

Ընկերությունը պարտավոր չէ տրամադրել ընկերության մասին գաղտնի տեղեկությունները, ինչպես նաև կոլեգիալ գարծաղի մարմնի նիստերի արձանագրությունները, միանձնյա գործաղի մարմնի հրամանները և հրահանգները:

Անհրաժեշտ է նշել, որ նշված փաստաթղթերի պատճենները տրամադրելու համար վճարի չափը սահմանվում է ընկերության կողմից և չի կարող փաստաթղթերի պատճենահանման և փոստային առաքման ծախսերից ավելի լինել:

Բացի այդ, ընկերության յուրաքանչյուր բաժնետեր իրավունք ունի անվճար ստանալ վերջին տարեկան հաշվետվության և վերստուգող հանձնաժողովի (վերստուգող) եզրակացության պատճենները:

Միաժամանակ ընկերության կանոնադրական կապիտալի առնվազն 5% կազմող ձայնի իրավունք տվող բաժնետոմսերին տիրող բաժնետերերը կարող են պահանջել փորձագետ կամ փորձագետների խումբ՝ ընկերության գործունեությանը վերաբերող հաշվետվությունները և գաղտնիք ներկայացնող փաստաթղթերը ստուգելու նպատակով: Ընդ որում՝ ստուգման հետ կապված ծախսերը փոխհատուցվում են ստուգումը պահանջողի կողմից:

Ընկերությունը պահպանում է նշված փաստաթղթերը իր գտնվելու վայրում: ՀՀ օրենսդրությամբ սահմանված չէ, թե փաստաթղթերի պահպանման ժամկետը: Այստեղից կարելի է եզրակացնել, որ բաժնետերը իրավունք ունի ծանոթանալ ընկերության ոչ միայն ընթացիկ տարվա, այլև ցանկացած տարիների փաստաթղթերին՝ ընկերության արխիվում պահպանված լինելու պայմանով: Արխիվում փաստաթղթերի պահպանման ժամկետները որոշվում են խորհրդի կողմից՝ գործող օրենսդրությանը համաձայն: Այսպես, հիմք ընդունելով հաշվապահական հաշվառման հիմքերի ու փաստաթղթերի պահպանման ժամկետը, կարելի է եզրակացնել, որ փաստաթղթերը պահպանվում են 5 տարի:

3.5 Բաժնետիրական ընկերության կողմից արժեթղթերի տեղաբաշխման դեպքում բաժնետիրոջ նախապատվության իրավունքը

Նախապատվության իրավունքը նշանակում է, որ ընկերության արժեթղթերի (ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի և դրանց փոխարկվող արժեթղթերի) լրացուցիչ տեղաբաշխման ժամանակ բաժնետերը իրավունք ունի առաջնահերթ կարգով ձեռք բերել դրանք: Ի դեպ, բաժնետոմսեր ձեռք բերելու իրավունք տվող ընկերության արժեթղթերի սեփականատերերն իրենց իրավունքից օգտվում են բաժնետերերից առաջ, ժամկետները սահմանվում են ընկերության կանոնադրությամբ: Նախապատվության իրավունքը բաժնետիրոջը հնարավորություն է ընձեռում բաժնետոմսերի և դրանց փոխարկվող

արժեթղթերի լրացուցիչ տեղաբաշխման ժամանակ պահպանել ընկերության կանոնադրական կապիտալում իր ունեցած տեսակարար կշիռը:

Համաձայն Օրենքի՝ նախապատվության իրավունքը նախատեսվում է միայն բաց բաժանորդագրության միջոցով լրացուցիչ տեղաբաշխվող բաժնետոմսերի դիմաց դրամական վճարի դեպքում: Նման իրավունքը պետք է հատուկ նշված լինի բաժնետիրական ընկերության կանոնադրությունում: Բաժնետոմսերի լրացուցիչ տեղաբաշխում իրականացնելու ժամանակ, որպեսզի ընկերության բաժնետերերը օգտվեն նախապատվության իրենց իրավունքից, ընկերությունը պարտավոր է նրանց ծանուցել այդ մասին: Ծանուցումը պետք է կատարվի տեղաբաշխումը սկսելու պահից առնվազն 30 օր առաջ և պարունակի տեղեկություններ.

- տեղաբաշխվող քվեարկող բաժնետոմսերի և քվեարկող բաժնետոմսերի փոխարկվող արժեթղթերի քանակի և տեղաբաշխման գնի մասին.
- ընկերության բաժնետերերի կողմից նախապատվության իրավունքով ձեռք բերվող բաժնետոմսերի և քվեարկող բաժնետոմսերի փոխարկվող արժեթղթերի քանակի որոշման կարգի, այդ իրավունքի իրականացման կարգի և ժամկետների մասին:

Բաժնետերն իր հերթին, որպեսզի չկորցնի իր իրավունքը և այն իրականացնի լրիվ ծավալով կամ մասնակիորեն, պետք է այդ մասին գրավոր ծանուցմամբ՝ առնվազն տեղաբաշխումը սկսելուց 1 օր շուտ, տեղյակ պահի ընկերությանը: Գրավոր ծանուցումը պետք է պարունակի հետևյալ տեղեկությունները.

- բաժնետիրոջ լրիվ ֆիրմային անվանումը (ֆիզիկական անձի համար՝ անունը), պետական գրանցման տվյալները (անձնագրային տվյալները), գտնվելու (բնակության) վայրը.
- ձեռք բերվող բաժնետոմսերի և/կամ արժեթղթերի քանակը.
- բաժնետոմսերի և/կամ արժեթղթերի դիմաց վճարման մասին փաստաթուղթը:

Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովը միաժամանակ իրավունք ունի որոշել չկիրառել նախապատվության իրավունքը, ինչպես նաև սահմանել այդ որոշման գործունեության ժամկետը: Նախապատվության իրավունքը չկիրառելու մասին որոշման գործողության ժամկետը չի կարող մեկ տարուց ավելի լինել: Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովում նման որոշումը ընդունվում է ժողովին մասնակցող բաժնետերերի ձայների պարզ մեծամասնությամբ:

3.6 Բաժնետոմսերի հետգնում պահանջելու բաժնետիրոջ իրավունքը

Ընկերության ձայնի իրավունք տվող տեղաբաշխված բաժնետոմսերի սեփականատերն իրավունք ունի ընկերությունից պահանջել բաժնետոմսերի հետգնման գնի որոշում և իր բաժնետոմսերի կամ դրանց մի մասի հետգնումը: Ընկերության բաժնետիրոջ այս իրավունքը գործում է միայն հետևյալ պայմանների առկայության դեպքում.

- ընդունվել է որոշում ընկերության վերակազմակերպման, նախապատվության իրավունքի կասեցման կամ խոշոր գործարք կնքելու մասին, և բաժնետերը կամ նրա լիազոր ներկայացուցիչը քվեարկել է ընկերության վերակազմակերպման, նախապատվության իրավունքի կասեցման կամ խոշոր գործարք կնքելու դեմ կամ չի մասնակցել քվեարկությանը.
- ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի կողմից ընկերության կանոնադրության մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու, կամ կանոնադրությունը նոր խմբագրությամբ հաստատելու հետևանքով սահմանափակվել են բաժնետիրոջ իրավունքները, և նա կամ նրա լիազոր ներկայացուցիչը դեմ են քվեարկել կամ քվեարկությանը չեն մասնակցել:

Այս իրավունքը կիրառելու անհրաժեշտ պայմաններն են. ձայնի իրավունք ունեցող բաժնետոմսերի սեփականատեր լինելը, նշված որոշումներին դեմ քվեարկելը կամ քվեարկությանը չմասնակցելը: Վերջինիս տակ հասկացվում է. բաժնետերը (նրա լիազոր ներկայացուցիչը) ստացել է քվեաթերթիկը, բայց այն չի ներկայացրել քվեարկության արդյունքները ամփոփելու համար:

Ընկերությունից բաժնետոմսի հետգնում կարող են պահանջել նաև արտոնյալ բաժնետոմսերի սեփականատերերը, որոնք այս կամ այն պայմանի առկայությամբ ստանում են ձայնի իրավունք: Այսպես, ընկերության արտոնյալ բաժնետոմսերի սեփականատերերը ձայնի իրավունք են ստանում այն ընդհանուր ժողովներում, որտեղ քննարկվում են ընկերության վերակազմակերպման կամ լուծարման, ինչպես նաև որոշակի դասի արտոնյալ բաժնետոմսերի սեփականատերերի համար՝ կանոնադրության փոփոխման կամ լրացման հետ կապված որոշումները, որոնք սահմանափակում են այդ տեսակի արտոնյալ բաժնետոմսերի սեփականատերերի իրավունքները:

Բացի այդ, առանձին ձևերի արտոնյալ բաժնետոմսերի սեփականատերերը, որոնց հասանելիք չափաքաբաժնի չափը սահմանված է ընկերության կանոնադրությամբ, իրավունք ունեն ձայնի իրավունքով մասնակցել ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովում բոլոր հարցերի քննարկմանը, ընկերության բաժնետերերի տարեկան այն ընդհանուր ժողովից հետո, որում չի ընդունվել որոշում այդ ձևի արտոնյալ բաժնետոմսերի դիմաց շահութաբաժիններ վճարելու մասին կամ ընդունվել է որոշում շահութաբաժինները չվճարելու կամ ոչ լրիվ վճարելու մասին: Նման արժեթղթերի սեփականատերերը բացի ձայնի իրավունքից, ստանում են նաև բաժնետոմսի հետգնում պահանջելու իրավունք: Այդ երկու իրավունքները դադարում են սկսած տվյալ ձևի արտոնյալ բաժնետոմսերի դիմաց լրիվ ծավալով շահութաբաժինների առաջին վճարումից հետո:

Եթե ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի օրակարգում ընդգրկվում են այնպիսի հարցեր, որոնք կարող են տեղիք տալ բաժնետոմսերի հետգնման պահանջի ծագման, ապա ընկերության խորհրդի կողմից օրակարգը հաստատելու պահին պետք է որոշվի.

- հետգնման ենթակա բաժնետոմսերի տեսակը;
- յուրաքանչյուր տեսակի բաժնետոմսի հետգնման գինը;
- վճարման ձևը, ժամկետները, աղբյուրները;
- բաժնետոմսերի հետգնման ժամկետները;
- հետգնմանն ուղղվող միջոցների չափը:

Ընկերությունից իրենց պատկանող բաժնետոմսերի հետգնման պահանջի իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմում է ընկերության բաժնետերերի ռեեստրի տվյալների հիման վրա՝ ելակետ ընդունելով ընկերության բաժնետերերի այն ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմելու օրը, որի օրակարգը բովանդակել է վերոհիշյալ հարցերը: Ընկերությունը պարտավոր է ծանուցման միջոցով տեղեկացնել նշված բաժնետերերին նրանց պատկանող բաժնետոմսերի հետգնման պահանջի իրավունքի, հետգնման գնի և իրականացման կարգի մասին: Բաժնետերն իր հերթին հետգնման պատճառ հանդիսացող որոշման ընդունման պահից 45 օրվա ընթացքում, կարող է ընկերության հասցեով ուղարկել գրավոր դիմում՝ պահանջելով ընկերությունից հետ գնել իրեն պատկանող բաժնետոմսերը: Նշված ժամկետը լրանալուց հետո ընկերությունը պարտավոր է 30 օրվա ընթացքում հետ գնել բաժնետոմսերը՝ բաժնետերերից ստացված դիմումների համապատասխան:

Բաժնետոմսերի հետգնմանն ուղղվող միջոցների ընդհանուր գումարը չի կարող գերազանցել ընկերության զուտ ակտիվների 10%-ը: Այն դեպքում, երբ հետգնման ներկայացված բաժնետոմսերի թիվը գերազանցում է նշված սահմանափակումը, բաժնետոմսերը հետ են գնվում բաժնետիրոջը պատկանող բաժնետոմսերի քանակին համամասնորեն:

Ընկերությունը բաժնետոմսերի հետգնումն իրականացնում է շուկայական արժեքով, որը որոշվում է առանց բաժնետոմսերի գնահատման և հետգնման պահանջի իրավունք տվող ընկերության գործողությունների հետևանքով առաջացող փոփոխությունները հաշվի առնելու: Հետգնման ենթակա բաժնետոմսերի շուկայական արժեքը սահմանվում է անկախ գնահատողի կողմից:

Հետգնված բաժնետոմսերը ուղղվում են ընկերության տնօրինությանը: Նշված բաժնետոմսերը չունեն ձայնի իրավունք, հաշվի չեն առնվում ձայների հաշվառման ժամանակ և դրանց դիմաց շահութաբաժիններ չեն հաշվարկվում: Դրանք ենթակա են տեղաբաշխման մեկ տարվա ընթացքում, իսկ եթե դրանք չեն տեղաբաշխվում, ապա ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովը պարտավոր է որոշում ընդունել դրանց մարման միջոցով ընկերության կանոնադրական կապիտալի նվազեցման մասին:

Բաժնետոմսերի ձեռքբերումը

Բաժնետիրական ընկերությունը պարտավոր է ձեռք բերել նաև ձեռքբերման ենթակա բաժնետոմսերը՝ բաժնետիրոջ պահանջով և համաձայն բաժնետոմսերի ձեռքբերման մասին ընկերության համապատասխան մարմնի որոշման, այսինքն՝ յուրաքանչյուր բաժնետեր իրավունք ունի վաճառել իրեն պատկանող բաժնետոմսերը, եթե այդ տեսակի կամ դասի բաժնետոմսերի ձեռքբերման մասին որոշում է ընդունվել: Համաձայն Օրենքի՝ ընկերության տեղաբաշխված բաժնետոմսերի ձեռքբերման առանձնահատկությունը կայանում է նրանում, որ տվյալ հարցը նախաձեռնողի դերում հանդես է գալիս ընկերության կառավարման համապատասխան մարմինը: Ընկերության բաժնետոմսերի ձեռքբերումը կատարվում է հետևյալ դեպքերում.

- ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի որոշմամբ ընկերության կանոնադրական կապիտալի փոքրացման նպատակներով՝ դրանց ընդհանուր քանակի կրճատմամբ;
- ընկերության խորհրդի որոշմամբ;
- փակ բաժնետիրական ընկերություններում ընկերության բաժնետերերի կողմից վաճառվող բաժնետոմսերի ձեռքբերման նախապատվության իրավունքից բաժնետերերի չօգտվելու դեպքում:

Եթե բաժնետերերի ընդհանուր ժողովի կողմից որոշման ընդունման դեպքում կանոնադրական կապիտալի չափի նվազման վերաբերյալ գոյություն չունի օրենսդրական որևէ սահմանափակում, ապա խորհրդի կողմից որոշման ընդունման դեպքում՝ ձեռքբերման են ենթակա ընկերության կանոնադրական կապիտալի 10%-ը կազմող բաժնետոմսերը: Բացի այդ, ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի որոշման հիման վրա ձեռք բերված բաժնետոմսերը մարվում են դրանց ձեռքբերման ժամանակ, իսկ խորհրդի որոշման դեպքում՝ այդ բաժնետոմսերը չեն կարող ձայնի իրավունք ունենալ, չեն հաշվարկվում ձայների քանակի հաշվարկման ժամանակ, դրանցով շահութաբաժիններ չեն վճարվում և բաժնետոմսերը կարող են իրացվել դրանց ձեռքբերման պահից մեկ տարվա ընթացքում: Հարկ է նշել, որ տեղաբաշխված բաժնետոմսերի ձեռքբերումը կատարվում է հիմնականում կանոնադրական կապիտալի փոքրացման համար: Սակայն չի բացառվում ընկերության կանոնադրական կապիտալի անփոփոխ պահելը: Վերջին դեպքում ընկերությունը մարելով ձեռքբերված բաժնետոմսերը՝ միաժամանակ ավելացնում է ընկերության բաժնետոմսերի անվանական արժեքը:

Բաժնետոմսերի ձեռքբերման մասին որոշմամբ պետք է սահմանվեն՝

- բաժնետոմսերի տեսակները և դասերը.
- բաժնետոմսերի քանակը՝ ըստ դրանց տեսակների և դասերի.
- առավելագույն ձեռքբերման գինը, վճարման ժամկետները և ձևը.

- բաժնետոմսերի ձեռքբերման ժամկետը:

Բաժնետոմսերի ձեռքբերման մասին ծանուցվում են ընկերության այն բաժնետերերը, որոնք ձեռքբերման մասին որոշումն ընդունելու պահին գրանցված են ընկերության բաժնետերերի ռեեստրում: Ծանուցումը կատարվում է ընկերության կողմից բաժնետոմսերի ձեռքբերման ժամկետի սկզբից առնվազն 30 օր շուտ: Ծանուցումը պարունակում է բաժնետոմսերի ձեռքբերման մասին որոշման հիմնական դրույթները: Բաժնետերերն իրենց հերթին պարտավոր են հայտ ներկայացնել ընկերությանը՝ հայտնելով իրենց համաձայնությունը բաժնետոմսերի ձեռքբերման մասին: Եթե բաժնետերերի հայտերով վաճառքի համար առաջարկվող բաժնետոմսերի քանակը գերազանցում է ընկերության կողմից ձեռքբերվող բաժնետոմսերի քանակը, ապա բաժնետոմսերը ձեռք են բերվում ներկայացված հայտերին համամասնաբար:

Բաժնետոմսերը վճարվում են ինչպես դրամական միջոցներով, այնպես էլ գույքով, եթե վերջինիս մասին նախատեսված է ընկերության կանոնադրության մեջ: Ձեռքբերման ժամկետը չի կարող 30 օրից պակաս լինել:

Ընկերությունը կարող է ձեռք բերել իր կողմից տեղաբաշխված ինչպես հասարակ, այնպես էլ արտոնյալ բաժնետոմսերը: Սակայն Օրենքը բովանդակում է բաժնետոմսերի ձեռքբերման որոշակի սահմանափակումներ, որոնց թվում են.

- լրիվ չի վճարվել ընկերության կանոնադրական կապիտալը.
- ընկերության կողմից հետ չեն գնվել բոլոր այն բաժնետոմսերը, որոնք պետք է հետ գնվեին.
- բաժնետոմսերի ձեռքբերման պահի դրությամբ ընկերության տնտեսական վիճակը համապատասխանում է օրենքով սահմանված անվճարունակության հայտանիշներին, կամ նշված հայտանիշներն ի հայտ կգան շահաբաժինների վճարման հետևանքով.
- բաժնետոմսերի ձեռքբերման պահին ընկերության գուտ ակտիվների արժեքը փոքր է ընկերության կանոնադրական կապիտալի, պահուստային հիմնադրամի և տեղաբաշխված արտոնյալ բաժնետոմսերի կանոնադրությամբ սահմանված լուծարային արժեքի ու դրանց անվանական արժեքի տարբերության ընդհանուր գումարից կամ կպակասի բաժնետոմսերի ձեռքբերման հետևանքով:

3.7 Բաժնետիրոջ իրավունքների դատական պաշտպանությունը

Յուրաքանչյուր քաղաքացի իրավունք ունի դատական կարգով պաշտպանել իր իրավունքները: Օրենքը նախատեսում է լրացուցիչ հիմքեր բաժնետիրոջ կողմից դատարան դիմելու համար.

- ընկերության բաժնետերերի ռեեստրում գրառման մերժումը.
- Օրենքի, այլ իրավական ակտերի և ընկերության կանոնադրության պահանջների խախտմամբ ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի որոշումների ընդունումը.
- խորհրդի կողմից ընկերության բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովի օրակարգի կամ կառավարման և վերստուգող մարմիններում թեկնածուների ներկայացման առաջարկի մերժումը.
- ընկերության խորհրդի կողմից բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողովի գումարման մերժումը:

Անհրաժեշտ է ավելացնել, որ Օրենքի, այլ իրավական ակտերի և ընկերության կանոնադրության պահանջների խախտմամբ ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի որոշումների դատական կարգով գանգատարկման համար կարևոր պայման է հանդիսանում անհրաժեշտ փաստարկների առկայությունը: Պետք է ապացուցվի, որ ընդհանուր ժողովի նախապատրաստման և անցկացման օրենսդրությամբ սահմանված ընթացակարգի չպահպանումը հանգեցրել է բաժնետիրոջ օրինական իրավունքների ոտնահարմանը: Այդպիսի փաստարկներ կարող են հանդիսանալ.

- ընդհանուր ժողովի հրավիրման մասին բաժնետիրոջը սահմանված կարգով չծանուցելը.
- ընդհանուր ժողովի օրակարգում ընդգրկված հարցերի վերաբերյալ փաստաթղթերի ծանոթացման հնարավորության չընձեռելը.
- քվեաթերթիկների ոչ ժամանակին առաքելը.
- բաժնետերերի ընդհանուր ժողովի օրակարգի փոփոխումը և այլն:

Միաժամանակ, դատարանը կարող է չփոխել ընդհանուր ժողովի որոշումը, եթե՝

- տվյալ բաժնետիրոջ քվեարկության մասնակցությունը չէր կարող փոխել ընդհանուր ժողովի որոշումը, այսինքն բաժնետիրոջ ձայնը չէր կարող կանխել տվյալ որոշման կայացումը.
- թույլ տված խախտումները էական չեն.
- որոշումը վնաս չի հասցրել բաժնետիրոջը:

Այս երեք պայմանները գործում են միաժամանակ:

Հարց է ծագում ընկերության այնպիսի կառավարման մարմինների որոշումների գանգատարկման վերաբերյալ, ինչպիսիք են խորհուրդը, գործադիր մարմինները:

Ընկերության բաժնետերը կարող է դատական կարգով բողոքարկել միայն ընկերության խորհրդի վերոհիշյալ հարցերի վերաբերյալ ընդունված որոշումները, եթե միայն վերջիններս խախտում են օրենսդրության և ընկերության կանոնադրության պահանջներն ու դրույթները, վնասում բաժնետերի ու շահերի: Հարկ է նշել, որ խորհրդի իրավասությանն են վերաբերում հիմնականում ընկերության բաժնետիրոջ իրավունքների իրագործման հետ կապված հարցերը: Եթե ընկերության խորհուրդը, այնուամենայնիվ, չի բավարարում ընկերության բաժնետերերի պահանջները, ապա նրա կազմը ենթակա է փոփոխման ընկերության ընդհանուր ժողովում, քանի որ, ինչպես արդեն նշվել է, ընկերության խորհրդի անդամները ընտրվում են մեկ տարի ժամկետով:

Բացի այդ, ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովը կարող է որոշում ընդունել ընկերության խորհրդի ցանկացած անդամի լիազորությունների վաղաժամկետ դադարեցման մասին, եթե խորհուրդը չի ընտրվել գումարային քվեարկության միջոցով: Այս դեպքում ընկերության խորհրդի անդամների լիազորությունների վաղաժամկետ դադարեցման մասին բաժնետերերի ընդհանուր ժողովը կարող է ընդունել որոշում միայն ընկերության խորհրդի բոլոր անդամների վերաբերյալ:

Անհրաժեշտ է նշել, որ Օրենքը ընկերության տեղաբաշխված սովորական բաժնետոմսերի մեկ և ավելի տոկոսը տնօրինող բաժնետիրոջը (բաժնետերերին) իրավունք է վերապահում ընկերության խորհրդի անդամների դեմ հայցով դիմել դատարան ընկերությանը պատճառած վնասները փոխհատուցելու պահանջով:

Գործադիր մարմինն իր գործունեության շրջանակներում չի կարող ուղղակի վնաս հասցնել բաժնետերերի շահերին, բայց նա իր գործողություններով կարող է վնաս հասցնել ընկերությանը: Ուստի ընկերության բաժնետերերը կարող են հայցով դիմել դատարան և պահանջել վնասի փոխհատուցում, ընդ որում՝ կարող է բողոքարկվել ոչ միայն գործադիր տնօրենի գործողությունները, այլ նաև վարչության այն անդամի (անդամների), որոնք կողմ են քվեարկել տվյալ որոշմանը, եթե միայն բաժնետերը տնօրինում է ընկերության սովորական բաժնետոմսերի առնվազն 1%-ին:

Ինչ վերաբերում է ընկերության ֆինանսատնտեսական գործունեության վերահսկումն իրականացնող մարմնին՝ վերստուգող հանձնաժողովին (վերստուգողին), ապա նա իր գործունեության արդյունքում որոշումներ չի կայացնում, այլ միայն տրամադրում է եզրակացություն:

Անհրաժեշտ է նշել, որ բաժնետերը դատարան կարող է ներկայացնել ուղղակի, անուղղակի, ինչպես նաև այլ բաժնետերերի հետ՝ համատեղ հայցեր: Ուղղակի հայցը ներկայացվում է այն դեպքում, երբ անմիջական վնաս է հասցվել բաժնետիրոջը:

Համատեղը թույլ է տալիս բաժնետիրոջը հայց ներկայացնել բոլոր նման իրավիճակում հայտնված բաժնետերերի հետ միասին: Բաժնետերը կարող է ներկայացնել անուղղակի հայց ոչ թե իր, այլ բաժնետիրական ընկերության շահերը պաշտպանելու համար:

3.8 Խոշոր և շահագրգռվածության առկայությամբ գործարքներում մասնակցելու բաժնետիրոջ իրավունքը

Բաժնետիրոջ քվեարկելու իրավունքը հնարավորություն է ընձեռում վերջինիս պաշտպանել իր գույքային իրավունքները այնպիսի գործարքների կատարումից, որոնց արդյունքում կարող է նվազել ընկերության ակտիվները, հետևաբար նաև՝ բաժնետոմսերի արժեքը: Այս իրավունքը բաժնետերը հիմնականում իրականացնում է բաժնետերերի ընդհանուր ժողովում խոշոր և շահագրգռվածության առկայությամբ գործարքների կնքման վերաբերյալ քվեարկությանը մասնակցելով:

Օրենքը խոշոր գործարքը սահմանում է որպես՝

- մեկ կամ մի քանի փոխկապված գործարքները, որոնք, բացառությամբ ընկերության բնականոն գործունեության շրջանակներում կատարվող գործարքների, ուղղակի կամ անուղղակի կապված են ընկերության կողմից գույքի ձեռքբերման կամ օտարման հետ, և որոնց արժեքը գործարքի կատարման մասին որոշում ընդունելու պահի դրությամբ կազմում է ընկերության ակտիվների հաշվեկշռային արժեքի 25 և ավելի տոկոսը.
- մեկ կամ մի քանի փոխկապված գործարքները, որոնք ուղղակի կամ անուղղակի կապված են ընկերության սովորական կամ սովորական բաժնետոմսերի փոխարկվող արտոնյալ բաժնետոմսերի տեղաբաշխման հետ, և որոնց արժեքը կազմում է ընկերության կողմից արդեն տեղաբաշխված սովորական բաժնետոմսերի գումարային անվանական արժեքի 25 և ավելի տոկոսը:

Խոշոր գործարքի առարկա հանդիսացող գույքի արժեքը այն ընկերությունների համար, որոնց բաժնետերերի թիվը չի գերազանցում հինգ հարյուր բաժնետերը սահմանվում է ընկերության խորհրդի որոշմամբ: Այս դեպքում ընկերության գույքի շուկայական արժեքը սահմանվում է ընկերության խորհրդի այն անդամների որոշմամբ, որոնք չունեն շահագրգռվածություն նշված գործարքում: Հինգ հարյուրից ավելի բաժնետեր ունեցող ընկերությունում գույքի շուկայական արժեքը սահմանվում է անկախ գնահատողի կողմից:

Օրենքը տալիս է խոշոր գործարքների հետևյալ դասակարգումը.

1. խոշոր գործարք, որի առարկան է գործարքի կատարման մասին որոշում ընդունելու պահի դրությամբ ընկերության ակտիվների հաշվեկշռային արժեքի 25-50 տոկոսը կազմող գույքը.
2. խոշոր գործարք, որի առարկան է գործարքի կատարման մասին որոշում ընդունելու պահի դրությամբ ընկերության ակտիվների հաշվեկշռային արժեքի 50 տոկոսից ավելին կազմող գույքը:

Դասակարգման առաջին խմբի դեպքում խոշոր գործարքի կատարման մասին որոշումն ընդունվում է ընկերության խորհրդի կողմից միաձայն: Եթե որոշման ընդունման պահին խորհրդում հնարավոր չէ ապահովել որոշման ընդունումը միաձայն, ապա խորհուրդն իրավունք ունի որոշում ընդունել հարցը ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովում քննարկելու մասին: Այս, ինչպես նաև դասակարգման երկրորդ խմբի դեպքում՝ գործարքի կատարման մասին որոշումը պարտադիր կարգով ընդունվում է ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովում: Խոշոր գործարքի որոշման ընդունման երկրորդ պարտադիր պայմանը որոշման ընդունումն է ժողովին մասնակցող բաժնետերերի ձայների երեք քառորդով:

Ինչ վերաբերում է շահագրգռվածության առկայությամբ գործարքի կատարման մասին որոշման ընդունմանը, ապա համաձայն Օրենքի՝ գործում է հետևյալ կարգը.

- մինչև հինգ հարյուր բաժնետեր ունեցող ընկերությունում որոշումը գործարքի կատարման մասին, որում առկա է շահագրգռվածություն, ընդունվում է խորհրդի կողմից գործարքի կատարման մեջ շահագրգռվածություն չունեցող խորհրդի անդամների ձայների մեծամասնությամբ:
- հինգ հարյուրից ավել բաժնետեր ունեցող ընկերությունում որոշումը գործարքի կատարման մասին, որում առկա է շահագրգռվածություն, ընդունվում է խորհրդի կողմից՝ գործարքը կնքելու մեջ շահագրգռվածություն չունեցող, խորհրդի անկախ անդամների ձայների մեծամասնությամբ: Խորհրդի անկախ անդամ է համարվում այն անձը, որը չի հանդիսանում ընկերության միանձնյա գործադիր մարմին, կամ կոլեգիալ գործադիր մարմնի անդամ, և որի ամուսինը, ծնողները, երեխաները, քույրերը և եղբայրները պաշտոններ չեն զբաղեցնում ընկերության կառավարման մարմիններում:

Եթե ընկերության խորհրդի բոլոր անդամները ճանաչվել են շահագրգիռ անձինք, քվորումի բացակայության պայմաններում գործարքի կնքման մասին որոշումն ընդունվում է ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի կողմից:

Անհրաժեշտ է նշել, որ համաձայն Օրենքի՝ ընկերության գործարքներում շահագրգիռ անձ է համարվում ընկերության խորհրդի անդամը կամ ընկերության կառավարման մարմիններում այլ պաշտոն զբաղեցնող անձը կամ բաժնետերեր (բաժնետերերը), որն իր հետ համագործակցող անձանց հետ միասին տիրապետում են ընկերության ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի 20 և ավելի տոկոսին, այն դեպքում երբ նշված անձինք, նրանց ամուսինները, ծնողները, երեխաները, քույրերը, եղբայրները, ինչպես նաև նրանց հետ համագործակցող անձինք՝

- հանդես են գալիս որպես գործարքի կողմ կամ մասնակցում են գործարքին որպես միջնորդ կամ ներկայացուցիչ:
- տիրապետում են գործարքի կողմ միջնորդ կամ ներկայացուցիչ հանդիսացող իրավաբանական անձի ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի (բաժնեմասերի) 20 և ավելի տոկոսին:
- պաշտոններ են զբաղում գործարքի կողմ, միջնորդ կամ ներկայացուցիչ հանդիսացող իրավաբանական անձի կառավարման մարմիններում:

Որոշումը շահագրգռվածության առկայությամբ գործարքի կատարման մասին ընդունվում է ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի կողմից ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի սեփականատեր և գործարքի կատարման մեջ շահագրգռվածություն չունեցող բաժնետերերի ձայների մեծամասնությամբ այն դեպքում, երբ՝

- գործարքի շուկայական արժեքը գերազանցում է ընկերության ակտիվների արժեքի 2%-ը,
- գործարքը կամ մի շարք փոխկապակցված գործարքներ կատարվում են ընկերության քվեարկող բաժնետոմսերի կամ քվեարկող բաժնետոմսերի փոխարկվող ընկերության այլ արժեթղթերի տեղաբաշխման նպատակով, և որոնց քանակն ավելի է ընկերության արդեն տեղաբաշխված քվեարկող բաժնետոմսերի քանակի 2%-ից:

Օրենքը սահմանում է, որ շահագրգռվածության առկայությամբ գործարքի կատարման վերաբերյալ որոշումը կարող է ընդունվել առանց ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի հրավիրման, եթե՝

- գործարքը հանդիսանում է ընկերությանը շահագրգիռ անձի կողմից տրամադրվող փոխառություն:
- գործարքը հանդիսանում է ընկերության և մյուս կողմի միջև բնականոն տնտեսական համագործակցության արդյունք:

Այս դեպքում, ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովն իրավունք ունի որոշում ընդունել ընկերության և մյուս կողմի միջև պայմանագրային հարաբերությունների

հաստատման մասին, որով կսահմանվեն կատարվող գործարքի բնույթը և առավելագույն արժեքը:

4. ԲԱԺՆԵՏՈՄՄԻ ՏԵՍԱԿՈՎ ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾ ԲԱԺՆԵՏԵՐԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ

Համաձայն Օրենքի՝ Ընկերությունը կարող է տեղաբաշխել ինչպես սովորական, այնպես էլ արտոնյալ բաժնետոմսեր: Բաժնետոմսերի նշված երկու տեսակներն իրենց սեփականատերերին օժտում են տարբեր իրավունքներով:

4.1 Սովորական բաժնետոմսերի սեփականատերերի իրավունքները

Ամենաընդհանուր ձևով, սովորական բաժնետոմսի սեփականատերն ունի ձայնի իրավունք: Միաժամանակ այս բաժնետոմսերի առանձնահատկությունն է հանդիսանում այն, որ դրանց դիմաց շահութաբաժինների վճարում չի երաշխավորվում: Ընկերության յուրաքանչյուր սովորական բաժնետոմս տալիս է իր սեփականատեր հանդիսացող բաժնետիրոջը միևնույն իրավունքները:

Համաձայն ՀՀ օրենսդրության՝ սովորական բաժնետոմսի սեփականատեր հանդիսացող բաժնետերն իրավունք ունի.

- մասնակցել ընկերության կառավարմանը.
- ստանալ շահութաբաժիններ ընկերության գործունեությունից առաջացած շահույթից.
- ստանալ ընկերության գործունեության վերաբերյալ ցանկացած տեղեկատվություն, բացի գաղտնի փաստաթղթերից.
- հայցով դիմել դատարան.
- ընկերության լուծարման դեպքում իրավունք ունի ստանալ ընկերության գույքից իր հասանելիք մասը, ինչպես նաև օրենսդրությամբ և ընկերության կանոնադրությամբ սահմանված այլ իրավունքներ:

4.2 Արտոնյալ բաժնետոմսերի սեփականատերերի իրավունքները

Արտոնյալ բաժնետոմսերի սեփականատերը չունի ձայնի իրավունք, եթե արտոնյալ բաժնետոմսերի որոշակի ձևերի համար այլ բան չի նախատեսված ՀՀ օրենսդրությամբ և ընկերության կանոնադրությամբ: Ընկերության որոշակի ձևի յուրաքանչյուր արտոնյալ բաժնետոմս տրամադրում է իր սեփականատեր հանդիսացող բաժնետիրոջը միևնույն իրավունքները: Համաձայն Օրենքի՝ Ընկերությունն իրավունք ունի տեղաբաշխել հաստատագրված կամ փոփոխական շահութաբաժնով, կուտակման, փոխարկելի և այլ տեսակի բաժնետոմսեր, եթե դա նախատեսված է ընկերության կանոնադրությամբ: Վերջինով պետք է սահմանվեն նաև ընկերության կողմից տեղաբաշխվող և հայտարարված յուրաքանչյուր ձևի արտոնյալ բաժնետոմսի դիմաց վճարվող շահութաբաժինը և լուծարային արժեքը, որոնք սահմանվում են դրամական գումարի ձևով կամ որպես տոկոսադրույք արտոնյալ բաժնետոմսի անվանական արժեքի նկատմամբ: Օրենքով սահմանված դեպքերում արտոնյալ բաժնետոմսերի սեփականատերն ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովում ստանում է ձայնի իրավունք:

Սովորական և արտոնյալ բաժնետոմսերով ամրագրվող իրավունքներն առավել մանրամասն կարելի է ներկայացնել դրանց համեմատական բնութագրի միջոցով:

4.3 Սովորական և արտոնյալ բաժնետոմսերի համեմատական բնութագիրը

Համեմատման չափանիշները	Սովորական բաժնետոմսեր	Արտոնյալ բաժնետոմսեր
1	2	3
Արժեթղթի բնութագրումը	Անժամկետ է, անբաժանելի, մարման ենթակա չէ (բացառությամբ Օրենքով նախատեսված դեպքերի):	Անժամկետ է, անբաժանելի, մարման ենթակա չէ (բացառությամբ Օրենքով նախատեսված դեպքերի):
Չայնի իրավունք	Սովորական բաժնետոմսերի սեփականատերը կարող է մասնակցել ընկերության ընդհանուր ժողովին՝ վերջինիս իրավասությանը պատկանող բոլոր հարցերի նկատմամբ ձայնի իրավունքով՝ «մեկ բաժնետոմս մեկ ձայն» սկզբունքով:	Արտոնյալ բաժնետոմսերի սեփականատերը չունի ձայնի իրավունք ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովում: Արտոնյալ բաժնետոմսերի սեփականատերն ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովում ձայնի իրավունք է ստանում, եթե <ul style="list-style-type: none"> • քննարկվում են ընկերության վերակազմակերպման կամ լուծարման հարցերը. • քննարկվում են ընկերության կանոնադրության փոփոխման կամ լրացման հետ կապված այն որոշումները, որոնք սահմանափակում են այդ ձևի արտոնյալ բաժնետոմսերի սեփականատերերի իրավունքները: Արտոնյալ բաժնետոմսերի սեփականատերը ձայնի իրավունք է ստանում, երբ խախտվել են նրա իրավունքները: Այսպես, որոշում չի ընդունվել շահութաբաժին վճարելու, կամ ընդունվել է որոշում այն չվճարելու կամ ոչ լրիվ վճարելու մասին: Արտոնյալ բաժնետոմսը կարող է տալ մի քանի ձայնի իրավունք, որը հավաստվում է ընկերության կանոնադրությամբ կամ արտոնյալ բաժնետոմսերի թողարկման մասին որոշմամբ:
Շահութաբաժին ստանալու իրավունք	Սովորական բաժնետոմսերի շահութաբաժինները հաստատագրված չեն, դրանց վճարումը ընկերության կողմից չի երաշխավորվում: Սովորական բաժնետոմսերի շահութաբաժինները վճարվում են արտոնյալ բաժնետոմսերի դիմաց շահութաբաժինները վճարելուց հետո:	Արտոնյալ բաժնետոմսերի դիմաց վճարվող շահութաբաժինները սահմանվում են ընկերության կանոնադրությամբ: Որոշակի ձևի արտոնյալ բաժնետոմսերի դիմաց լրիվ կամ մասնակի չվճարված շահութաբաժինը կուտակվում և վճարվում է հետագայում (կումուլյատիվ արտոնյալ բաժնետոմս): Եթե ընկերության կանոնադրությամբ արտոնյալ բաժնետոմսերի դիմաց վճարվող շահութաբաժնի չափը նախատեսված չէ, ապա դրանց սեփականատերերն ունեն սովորական բաժնետոմսերի սեփականատերերի հետ շահութաբաժին ստանալու հավասար իրավունք: Եթե ընկերության կանոնադրությամբ նախատեսված են արտոնյալ բաժնետոմսերի երկու կամ ավելի ձևեր, ապա ընկերության կանոնադրությամբ պետք է սահմանվի նաև շահութաբաժինների վճարման հերթականությունը յուրաքանչյուր ձևի արտոնյալ բաժնետոմսերի համար: Երեք հաջորդական տարիների ընթացքում արտոնյալ բաժնետոմսերին հասանելիք չափաբաժնի չվճարելը կարող է հիմք հանդիսանալ ընկերությունը դատական կարգով լուծարելու համար:
Ընկերության լուծարման	Ընկերության լուծարման դեպքում ընկերության գույքի իր հասանելիք մասը ստանա-	Ընկերության լուծարման դեպքում ընկերության գույքի իր հասանելիք մասը ստանալու արտոն-

<p>դեպքում ընկերության գույքի իր հասանելիք մասը ստանալու իրավունք</p>	<p>լու սովորական բաժնետոմսի սեփականատիրոջ իրավունքը բավարարվում է բոլոր պարտատերերի և արտոնյալ բաժնետոմսերի սեփականատերերի պահանջները բավարարելուց հետո:</p>	<p>յալ բաժնետոմսի սեփականատիրոջ իրավունքը բավարարվում է բոլոր պարտատերերի, այդ թվում՝ նաև պարտատոմսերի սեփականատերերի պահանջները բավարարելուց հետո և սովորական բաժնետոմսերի սեփականատերերի պահանջները բավարարելուց առաջ՝ դրանց լուծարային արժեքով: Վերջինս սահմանվում է դրամական գումարի տեսքով կամ որպես տոկոսադրույք արտոնյալ բաժնետոմսի անվանական արժեքի նկատմամբ: Լուծարային արժեքը համարվում է սահմանված նաև այն դեպքում, եթե ընկերության կանոնադրությամբ նախատեսված է դրա որոշման կարգը:</p>
<p>Առաջնահերթ կարգով ընկերության կողմից տեղաբաշխվող բաժնետոմսեր ձեռք բերելու իրավունք, եթե նախատեսված է բաժնետոմսերի թողարկման մասին որոշմամբ</p>	<p>Կիրառվում է</p>	<p>Կիրառվում է, եթե արտոնյալ բաժնետոմսը փոխարկվում է ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի:</p>
<p>Ընկերության գործունեության վերաբերյալ ցանկացած տեղեկատվություն՝ գաղտնի փաստաթղթերից բացի, ստանալու իրավունքը</p>	<p>Կարող են, բացի կոլեգիալ մարմնի նիստերի արձանագրությունների, միանձնյա գործադիր մարմնի հրամանների և հրահանգների:</p>	<p>Կարող են, բացի կոլեգիալ մարմնի նիստերի արձանագրությունների, միանձնյա գործադիր մարմնի հրամանների և հրահանգների:</p>
<p>Իր սեփականությունը հանդիսացող բաժնետոմսերի օտարման կամ այլ ձևով այլ անձանց փոխանցման իրավունքը</p>	<p>Կարող են</p>	<p>Կարող են</p>

**5. ԲԱԺՆԵՏՈՍՄԵՐԻ ՈՐՈՇԱԿԻ ՓԱԹԵԹԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԴԵՊՋՈՒՄ
ԲԱԺՆԵՏԻՐՈՋ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ**

Բաժնետոմսով անրագրվող ձայնի իրավունքը բաժնետիրոջը հնարավորություն է տալիս ազդել ընկերության քաղաքականության վրա՝ կախված բաժնետոմսերի փաթեթի մեծությունից: Օրենքը սահմանում է ընկերության կանոնադրական կապիտալում մինչև 10%-ը կազմող ձայնի իրավունք տվող բաժնետոմսերը տնօրինող բաժնետիրոջ (բաժնետերերի) իրավունքները: Առաջնորդվելով Օրենքով՝ ըստ բաժնետիրոջ փաթեթի մեծության կարելի է առանձնացնել բաժնետերերի ազդեցության մի շարք ոլորտներ:

Ընկերության կանոնադրական կապիտալի մինչև 10%-ը կազմող ձայնի իրավունք տվող բաժնետոմսերին տիրող բաժնետերերի ազդեցության ոլորտները

Ընկերության կանոնադրական կապիտալի առնվազն 1%-ը կազմող ձայնի իրավունք տվող բաժնետոմսերին տնօրինող բաժնետերը (բաժնետերերը) իրավունք ունի (ունեն).

- ընկերության խորհրդի անդամների, ընկերության տնօրենի, ընկերության վարչության անդամների, ինչպես նաև կառավարիչ կազմակերպության և անհատ կառավարչի դեմ հայցով դիմել դատարան՝ ընկերությանը պատճառաձև վնասների փոխհատուցման պահանջով:

Ընկերության կանոնադրական կապիտալի առնվազն 2%-ը կազմող ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի սեփականատեր հանդիսացող բաժնետերը (բաժնետերերը) իրավունք ունի (ունեն).

- ընկերության ֆինանսական տարվա ավարտից հետո 30 օրվա կամ ընկերության կանոնադրությամբ սահմանված այլ, ավելի երկար ժամկետի ընթացքում, երկուսից ոչ ավել առաջարկություններ ներկայացնել ընկերության բաժնետերերի ընդհանուր տարեկան ժողովի օրակարգի վերաբերյալ, ինչպես նաև առաջարկել ընկերության խորհրդի կամ վերստուգող հանձնաժողովի անդամության թեկնածուներ:

Ընկերության կանոնադրական կապիտալի առնվազն 5%-ը կազմող ձայնի իրավունք տվող բաժնետոմսերին տիրող բաժնետերը (բաժնետերերը) կարող է (են).

- պահանջել աուդիտորի կողմից ընկերության ֆինանսատնտեսական գործունեության ստուգում:

Ընկերության կանոնադրական կապիտալի առնվազն 10%-ը կազմող ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի սեփականատեր հանդիսացող բաժնետերը (բաժնետերերը) իրավունք ունի (ունեն).


- ընդգրկվել լուծարային հանձնաժողովի կազմում կամ այստեղ նշանակել իր (իրենց) լիազոր ներկայացուցչին.
- առանց ընտրության ընդգրկվել ընկերության խորհրդի կազմում կամ ընկերության խորհրդի կազմում նշանակել իր (իրենց) ներկայացուցչին.
- պահանջել գումարել ընկերության բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողով, և եթե պահանջը ներկայացնելու ամսաթվից 10-օրյա ժամկետում ընկերության խորհուրդը ընկերության բաժնետերերի արտահերթ ժողովի գումարման մասին որոշում չի ընդունում կամ որոշում է ընդունում ընկերության բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողովի գումարումը մերժելու մասին, ապա հրավիրել ժողով.
- ծանոթանալ ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակին:

6. ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՁԵՎԵՐԸ: ԲԱԺՆԵՏԵՐԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ

Բաժնետոմսով ամրագրվող իրավունքների համակարգը թե բաց, թե փակ բաժնետիրական ընկերությունների համար նույն է, սակայն առանձին իրավունքների իրականացման տեսանկյունից կարևորվում է հենց բաժնետիրական ընկերության ձևը: ՀՀ օրենսդրությամբ տարբերում են ընկերության հետևյալ ձևերը.

- բաց բաժնետիրական ընկերություն.
- փակ բաժնետիրական ընկերություն:

Ընկերության տեսակների տարբերությունները ներկայացված են 2-րդ գծապատկերում:



Գծապատկեր 2

Բաց բաժնետիրական ընկերությունը կարող է իրականացնել բաժնետոմսերի ինչպես բաց (հանրային), այնպես էլ փակ (մասնավոր) տեղաբաշխում: Առաջին դեպքում բաժնետոմսերն իրացվում են անսահմանափակ թվով անձանց միջև, մասնավորի դեպքում՝ նախապես հայտնի, այսինքն բաց բաժնետիրական ընկերությունն իրավունք ունի իր կողմից թողարկված բաժնետոմսերը տեղաբաշխել ազատ և իրականացնել դրանց ազատ վաճառքը, ինչպես նաև տեղաբաշխել բաժնետոմսերը փակ բաժանորդագրությամբ: Փակ բաժնետիրական ընկերությունը իրավունք չունի իրականացնել իր բաժնետոմսերի բաց տեղաբաշխում (ազատ բաժանորդագրություն) և իր բաժնետոմսերը առաջարկել անսահմանափակ թվով անձանց: Փակ ընկերության բոլոր բաժնետոմսերը տեղաբաշխվում են միայն դրա հիմնադիրների կամ նախօրոք որոշված անձանց միջև:

Ինչ վերաբերում է բաժնետոմսերի օտարման ընթացակարգին, ապա հաշվի առնելով վերոհիշյալը՝ բաց ընկերության բաժնետերերն իրավունք ունեն օտարել իրենց պատկանող բաժնետոմսերն առանց ընկերության մյուս բաժնետերերի նկատմամբ նախապատվության իրավունքի կիրառման: Ի տարբերություն բաց բաժնետիրական ընկերությունների՝ փակ բաժնետիրական ընկերության բաժնետերերի այդ իրավունքի կիրառումը սահմանափակված է: Փակ ընկերության բաժնետոմսերի օտարման դեպքում ընկերության

բաժնետերերն ունեն վաճառվող բաժնետոմսերի նույն գնով, որով այն վաճառվում է և այլ հավասար պայմաններով ձեռքբերման նախապատվության իրավունք: Եթե ընկերության կանոնադրությամբ նախատեսված ժամկետներում բաժնետերերից որևէ մեկը չի օգտվում իր նախապատվության իրավունքից, ապա բաժնետիրական ընկերությունն իրավունք ունի այդ բաժնետոմսերը ձեռք բերել սեփականատիրոջ հետ համաձայնեցված գնով: Բաժնետիրական ընկերության կողմից բաժնետոմսերը ձեռք բերելուց հրաժարվելու կամ դրանց գնի վերաբերյալ համաձայնության չգալու դեպքում բաժնետոմսերը կարող են օտարվել երրորդ անձանց: Փակ բաժնետիրական ընկերության բաժնետերերի կողմից վաճառվող բաժնետոմսերի ձեռքբերման նախապատվության իրավունքի իրականացման կարգը և ժամկետները սահմանվում են ընկերության կանոնադրությամբ: Նախապատվության իրավունքի ժամկետը չի կարող լինել բաժնետոմսերի վաճառքի առաջարկման պահից սկսած 30 օրից պակաս և 60 օրից ավելի:

Անհրաժեշտ է նշել, որ փակ բաժնետիրական ընկերության բաժնետոմսերի գրավի և հետագայում գրավառուի կողմից դրանց վրա բռնագանձում տարածելու դեպքում համապատասխանաբար կիրառում է բաժնետոմսի վաճառքի պայմանները: Վերջինս գործում է նաև, երբ ընկերությունը մերժում է բաժնետոմսերի անցումը քաղաքացու ժառանգներին կամ բաժնետեր իրավաբանական անձի իրավահաջորդին:

Ինչ վերաբերում է բաժնետերերի թվաքանակին, ապա փակ ընկերությունը պետք է ունենա 49-ից ոչ ավել բաժնետեր: Եթե փակ ընկերության բաժնետերերի թիվը 49-ից ավելի է դարձել, ընկերությունը մեկ տարվա ընթացքում պետք է վերակազմավորվի բաց ընկերության կամ համապատասխանաբար կրճատի բաժնետերերի թվաքանակը: Հակառակ դեպքում այն ենթակա է լուծարման դատական կարգով:

7. ԲԱԺՆԵՏԻՐՈՋ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

ՀՀ օրենսդրությամբ բաժնետիրոջ հիմնական պարտականություններն են.

- ընկերության կանոնադրությամբ նախատեսված կարգով, չափերով, եղանակներով և ժամկետներում ներդրումներ կատարելը.
- ընկերության գործունեության վերաբերյալ գաղտնի տեղեկատվության չհրապարակելը.
- ռեեստր վարողին իրեն վերաբերող օրենսդրությամբ սահմանված տվյալների փոփոխության մասին տեղեկացումը.
- ընկերության գործարքներում բաժնետիրոջ մոտ շահագրգիռ անձի հայտանիշի ի հայտ գալու դեպքում ընկերության խորհրդին, վերստուգող հանձնաժողովին (վերստուգողին) և ընկերության աուդիտն իրականացնող անձին տեղեկությունների տրամադրումը:
Բաժնետերը կարող է կրել նաև ընկերության կանոնադրությամբ սահմանված այլ պարտականություններ:

Օրենսգիրքը պարտավորեցնում է ընկերության հիմնադիրներին մինչև ընկերության գրանցումն ամբողջությամբ վճարել կանոնադրական կապիտալը: Ինչ վերաբերում է ընկերության լրացուցիչ տեղաբաշխված բաժնետոմսերի դիմաց վճարմանը, ապա ըստ Օրենքի՝ դրանք պետք է վճարվեն տեղաբաշխման մասին որոշմամբ սահմանված ժամկետում, բայց ոչ ուշ, քան դրանց տեղաբաշխման պահից մեկ տարվա ընթացքում: Լրացուցիչ տեղաբաշխվող բաժնետոմսերի ձեռքբերման ժամանակ, որոնց դիմաց վճարումը նախատեսված է միայն դրամական միջոցներով, պետք է վճարվի դրանց անվանական արժեքի առնվազն 25%-ը: Ընկերության բաժնետոմսերը և այլ արժեթղթերը, որոնց դիմաց վճարումը նախատեսված է ոչ դրամական միջոցներով, դրանց ձեռքբերման ժամանակ վճարվում են լրիվ արժեքով, եթե արժեթղթերի տեղաբաշխման մասին որոշմամբ այլ բան նախատեսված չէ:

Համաձայն Օրենսգրքի՝ ընկերության բաժնետոմսերի վճարելու պարտականությունից բաժնետիրոջն ազատել, ներառյալ ընկերության նկատմամբ պահանջների հաշվանցումով, չի թույլատրվում: Բաժնետիրոջ կողմից նշված պարտականության չկատարման համար Օրենքը նախատեսում է հետևյալ պատժամիջոցը՝ բաժնետոմսը փոխանցվում է ընկերության տրամադրության տակ և դրանց արժեքը ժամանակին չվճարած բաժնետերերը գրկվում են բաժնետոմսերի նկատմամբ սեփականության իրավունքից: Միաժամանակ, դրամական և այլ գույքը, որը վճարվել է բաժնետոմսերի դիմաց, բաժնետիրոջը չեն վերադարձվում: Բացի այդ, բաժնետոմսերի դիմաց վճարման պարտավորությունների չկատարման համար դրամական պատժամիջոցներ կարող են սահմանվել նաև ընկերության կանոնադրությամբ: Բաժնետիրոջ երկրորդ պարտականությունը, ինչպես արդեն նշվել է, ընկերության գործունեության վերաբերյալ գաղտնի տեղեկատվության չհրապարակումն է: Այս պարտականության կատարման համար անհրաժեշտ է, որպեսզի ընկերության կանոնադրությամբ պարզորոշ սահմանված լինեն տեղեկատվության գաղտնիության շրջանակները: Կանոնադրությունը պետք է սահմանի նաև պատժամիջոցներ՝ կապված այդ տեղեկատվության հրապարակման հետ:

Ընկերության բաժնետերերը պարտավոր են ընկերության ռեեստր վարողին ժամանակին տեղեկացնել իրեն վերաբերող այնպիսի տվյալների մասին, ինչպիսիք են իրավաբանական անձի համար՝ անվանումը, գրանցման և փոստային հասցեն, հաշվարկային հաշիվը, ֆիզիկական անձի համար՝ ազգանունը և անունը, անձնագրային տվյալները և փոստային հասցեն, ինչպես նաև բաժնետոմսերի քանակը ըստ ձևերի ու տեսակների, բաժնետոմսերի ձեռքբերման ամսաթիվը և հիմքերը, բաժնետոմսերի օտարման ամսաթիվը և հիմքերը: Նշված տվյալները բաժնետիրոջ կողմից չներկայացնելու դեպքում՝ ընկերությունը պատասխանատվություն չի կրում բաժնետիրոջը պատճառված վնասի համար:

Ինչ վերաբերում է ընկերության գործարքներում շահագրգիռ անձ հանդիսացող բաժնետիրոջը, ապա նա պարտավոր է տեղեկություններ տրամադրել ընկերության

խորհրդին, վերստուգող հանձնաժողովին (վերստուգողին) և ընկերության ատոլիտն իրականացնող անձին՝

- այն իրավաբանական անձանց մասին, որոնցում նա ինքնուրույն կամ նրա հետ համագործակցող անձանց հետ համատեղ տիրապետում է ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի (բաժնեմասերի) 20 և ավելի տոկոսին.
- այն իրավաբանական անձանց մասին, որոնց կառավարման մարմիններում նա պաշտոն է զբաղեցնում.
- իր կողմից կատարված, կատարվող կամ կատարման նախատեսված գործարքների մասին, որոնցում նա կարող է համարվել շահագրգիռ անձ.

Ինչ վերաբերում է կանոնադրությամբ սահմանված այլ պարտականություններին, ապա դրանք կարող են պարտականությունների ուժ ստանալ միայն այն դեպքում, երբ կանոնադրությամբ դրանց խախտման համար նախատեսված են պատժամիջոցներ:

Ինչպես արդեն նշվել է, բաժնետիրական ընկերության բաժնետերերը պատասխանատվություն չեն կրում նրա պարտավորությունների համար և իրենց պատկանող բաժնետոմսերի արժեքի սահմաններում կրում են ընկերության գործունեության հետ կապված վնասների ռիսկը: Մակայն առանձին դեպքերում բաժնետիրոջ վրա կարող է դրվել նաև լրացուցիչ (սուբսիդիար) պատասխանատվություն՝ ընկերության պարտավորություններով: Այսպես, բաժնետոմսերի դիմաց վճարումները ոչ լրիվ կատարած բաժնետերերն ընկերության պարտավորությունների համար կրում են համապարտ պատասխանատվություն նաև իրենց կողմից չվճարած ներդրման սահմաններում: Կամ, լրացուցիչ պատասխանատվություն սահմանվում է այն բաժնետերերի նկատմամբ, որոնք ունենալով ընկերությանը կատարման համար պարտադիր ցուցումներ տալու իրավունք կամ այլ կերպ ընկերության գործունեությունը կանխորոշելու հնարավորություններ՝ իրենց գործողությունների (անգործության) արդյունքում ընկերությանը կարող են հանգեցնել անվճարունակության: Նշված բաժնետերերի գործողությունները (անգործությունը) համարվում են ընկերության անվճարունակության պատճառ միայն այն դեպքում, եթե այդ անձինք օգտագործել են այդ իրավունքը կամ հնարավորությունները ընկերությանը որոշակի գործողություններ կատարել կամ չկատարել պարտադրելու նպատակով՝ նախօրոք իմանալով, որ այդ պատճառով ընկերությունը կհայտնվի անվճարունակության վիճակում:

Ինչպես որ բաժնետիրոջ որոշ իրավունքները, այնպես էլ բաժնետիրոջ որոշ պարտականություններ գործում են բաժնետոմսերի փաթեթի մեծությամբ պայմանավորված: Այդ պարտականությունները նախատեսված են «Արժեթղթերի շուկայի կարգավորման մասին» ՀՀ օրենքով, համաձայն որի յուրաքանչյուր անձ, որը մեկ կամ ավելի գործարքների հետևանքով դառնում է տվյալ ընկերության բաժնետոմսերի նշանակալից սեփականատեր, այսինքն բաժնետոմսերի 10 և ավելի տոկոսի սեփականատեր, պարտավոր է նշանակալից սեփականատեր դառնալու օրվանից հետո՝ 10 օրվա ընթացքում, պատվիրված նամակով բաժնետիրական ընկերությանը, ինչպես նաև ֆոնդային բորսա ուղարկել և ՀՀ արժեթղթերի հանձնաժողով ներկայացնել հայտարարագիր, որի ձևը սահմանում է ՀՀ արժեթղթերի հանձնաժողովի որոշմամբ:

Նմանատիպ պարտավորություն են կրում նաև՝

- յուրաքանչյուր անձ, որը մեկ կամ ավելի գործարքների հետևանքով դառնում է տվյալ ընկերության բաժնետոմսերի խոշոր սեփականատեր, այսինքն բաժնետոմսերի 20 և ավելի տոկոսի սեփականատեր, կամ
- յուրաքանչյուր անձ, որը բաժնետիրական ընկերության խորհրդի անդամ է, գործադիր մարմնի, վերստուգող մարմնի անդամ կամ պաշտոնատար անձ (ստորաբաժանման ղեկավար կամ խորհրդատու):

Նշված անձանց համար հայտարարագրի ձևը ևս սահմանում է ՀՀ արժեթղթերի հանձնաժողովի որոշմամբ: Բացի այդ, յուրաքանչյուր ամսվա ավարտից հետո՝ 15 օրվա

ընթացքում վերոնշյալ անձինք պարտավոր են ՀՀ արժեթղթերի հանձնաժողով ներկայացնել հայտարարագիր, որտեղ նշվում են հաշվետու ամսվա ընթացքում տեղի ունեցած փոփոխությունները:

Արժեթղթերի սեփականության ընդհանուր հայտարարագրման է ենթակա յուրաքանչյուր անձ, որը բաժնետիրական ընկերության բաժնետոմսերի ավելի քան 10 տոկոսի սեփականատեր է, պարտավոր է թողարկողին ուղարկել, իսկ արժեթղթերի հանձնաժողով ներկայացնել հայտարարագիր, որի ձևը և ներկայացման ժամկետները սահմանվում են արժեթղթերի հանձնաժողովի կողմից: